

Ս. ԼՕՐԵԼԻԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ԱՐԾԱԿ ԶՈՊԱՆԵԱՆԻՆ

ԱՐԾՈՒԻԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Պետական Թանգարանում պահ-
ւող Արշակ Զօպանեանի անձնական Փոնդում գտնւում են վերջինիս ուղղուած
չուեղաբանակ լրագրող, գրող, խորհրդային նախկին պետական գործիչ Ս. Լօրէլ-
իի (Սուրէն Երզնկեան, 1880—1963) 12 նամակները:

Սոյն նամակներն առաջին հերթին ուշագրաւ են հայ—չուեղական մշակու-
թային կապերի առընչութեամբ, ինչպէս նաեւ որոշ մանրամասներ են լրացնում
Զօպանեանի գործունէութեան վերաբերեալ: Հիմնականում Լօրէլին գրում է
1882—1903 թուականներին Շուեղիայում բնակուած բանասէր Նորայր
Բիւզանդացու, նրա արխիմիլ փրկման պատմութեան, ժամանակի շուէդ հայ-
գէտների մասին, որոնց հետ Փարիզի հայ մտաւորականութեան վրականաց-
ւած հանդիպում—ընդունելութեանն այնքան նախանձախնդիր է եղել Լօրէլին:
Այս նամակներից իմանում ենք, որ շուեղաբնակ հայ մտաւորականը փորձել է
ուղիներ որոնել՝ Զօպանեանին Նորելեան մրցանակի ներկայացնելու ուղղու-
թեամբ, ինչպէս նաեւ շուէդ գրող Լաքերկիվստին² հայ քերթութեան շուեղերէն
թարգմանութեան գործին ներգրաւել փորձելու մասին: Լօրէլին նամակներում
հայ գրականութեան դասականների մարդկային դիմագիծը փոքրիկ հպումնե-
րով լրացնող վկայութիւններ կան՝ Պերճ Պոռշեանից մինչեւ Եղիշէ Զարենց:
«Լայն» է նաեւ նամակագրի յիշած գործինների ընդգրկումը (նրա նամակներում
խօսք է գնում թէ՝ Ղազարոս Աղայեանի եւ Ազատ Վշտունու եւ թէ՝ Ժան-Պոլ
Սարտրի եւ Թոմըս Էլիսթի մասին): Հետաքրքիր են նաեւ Շուեղիայի թագաւո-
րութեան, նրա հասարակական կացութագեւել մասին վկայակոչումները, Նո-
րելեան մրցանակի յանձնման առընչուող խորհրներին վերաբերող տեղեկու-
թիւնները:

Ծնունդով թիֆլիսեցի Սուրէն Երզնկեան—Լօրէլին դարասկզբից եղել է
Կոմունիստական Կուսակցութեան գործիչ, 1910—1920ական թուականներին
թիֆլիսում եւ Բաքրում խմբագրել է մի շարք պարբերականներ (Մարտակըն,
Կարմիր աստղ, Վիշլի եւայլն), զբաղուել հրատարակչական գործունէու-
թեամբ, տպագրել գրական—հրապարակախոսական բնոյթի տասնեակ գրքոյկ-
ներ: 1929—1930 թուականներին եղել է Խորհրդային Միութեան առեւտրական
ներկայացուցիչը Ֆինլանդիայում: 1930ի գարնանը փախել է Ֆինլանդիա՝ խու-
սափելով յետագայ հաշուեյարդարի հեռանկարից: Մինչեւ 1944 թուականն ապ-
րել է Հելսինկիում, շուեղերէն եւ Փիններէն լեզուներով գրքեր հրատարակել
Կամոյի, Ստալինի եւ Կովկասի ժողովուրդների մասին, Ս. Լօրէլի եւ իմամ
Ռագուզա ծածկանուններով: 1938ին Փարիզում լոյս է տեսել Ստալինի կեանքը

Գրանսերէն ծաւալուն աշխատութիւնը: 1944ին փախել է Շուեղիա, հաստատւել Ուկիսալա քաղաքում: Շուեղիայում հրատարակել է երկու գիրք, գրական-հրապարակախօսական բնոյթի յօդուածներով աշխատակցել սփիռքահայ մասուլին (Մ. Նահանգներ՝Պայքար, Երիտասարդ Հայատան, Լրաբեր, Փարիզ՝ Արեւմուտք, Պոլիս՝ Երջանիկ, եւայլն): Կապեր է ունեցել գաղութահայ մի շարք մտաւորականների հետ: Վախճանուել է Ուկիսալայում, իր հարուստ արիմեր կտակել Օսլոյի համալսարանի գրադարանին:

Արշակ Զօպանեանի ֆոնդում պահուող նամակների սեւագրութիւնների մէջ չկան Լօրէլիին յղուած նամակների սեւագրերը: Սակայն Լօրէլիի իւրաքանչիւր նամակից գրեթէ միշտ պարզ է դառնում, թէ նախորդ նամակում ինչ է գրել Զօպանեանը: Դրանք գրուել են 1948—1952 թուականներին, Ուկիսալյալից: Նամակներում կան մի շարք կրկնութիւններ. առկայ է որոշ երկարաբանութիւն, ինչը կարելի է բացատրել որպէս հայութիւնից կտրուած հայ մտաւորականի խօսելու պահանջի դրսեւորում: Ներկայացուող նամակներում կատարել ենք ուղղագրական բնոյթի ուղղումներ, լեզուական մանր հպումներ, անձնանուններ, տեղանուններն ու օտարաբանութիւնները դարձրել ենք միատարր, իսկ առհասարակ նամակների գրութիւնը, ընդգծումները թողել ենք անփոփոխ:

Ա.

5 Յունիս 1948, Uppsala,
Idunagatan 6

Մեծարգոյ պ. Ա. Զօպանեան
Փարիզ, բի Մէյ.

Սիրելի Վարայես,

1946 թուին, երբ սկսեցի ծանօթանալ պատահմամբ միայն կորստից գերծ մնացած նորայրեան անտիպ ծեռագրերի հետ³, ես հանդիպեցի՝ ի միջի այլոց՝ նաև Ձեր բացիկ-նամակների (դժբախտաբար միայն հատուկտոր մնացորդ-ներ Ձեր նամակագրութեան), որ Դուք ուղարձ եք 1904—1906 թթ.ին Փարիզից Վենետիկ՝ Նորայր Բիւզանդացուն: Այդ նամակագրութիւնը պտտում է Քուչակի շուրջը, որի ստեղծագործութիւնը հետաքրքրել էր այն ժամանակները Ձեզ որպէս արուեստագէտ-պուտի, իսկ Նորայրին՝ որպէս բանասէրի: Դեռ այն օրերին ես ուզում էի գրել Ձեզ եւ հաղորդել, թէ նորայրեան ծեռագրերի մէջ ժողոված են մօտ երեք հարիւր տաղ (ես անձամբ չեմ ստուգած թիւը, սակայն հաւատում եմ Նորայրի սեփական պնդումին), մի քանի նորայրեան սեւագրութիւնների վարիանտներ եւ մի մաքուր արտագրած օրինակ տաղերի՝ «տաղարան»: Պատերազմը նոր էր Վերջացել, ես կտրուած էի Արեւմտեան Եւրոպայից, զգիտի Ձեր հասցեն.— ցանկութիւնս մնաց սուկ անկատար ցանկութիւն:

Այս օրերին ստացայ Մելզոնեան Յանձնաժողովի⁴ կողմից նույն չորս գիրք (Ալբնից⁵, Տէր Ներսիսեանի⁶, Սաքըքեանի⁷ և Ձեր Հայրէններու Բուրսայանը⁸) Նուպարեան Մատենադարանի գրադարանապետ պ. Անտոնեանի

նամակով, որի մեջ վերջինս, ի միջի այլոց՝ հաղորդում էր ինձ, թէ գրքերի մի նոյնայիսի քողկութեամբ ուղարկուած է նաև փրոֆ. Հենրիկ Նիպերկին¹⁰: Մի քանի օր առաջ ես զնացել եմ տեսութեան վերջինիս, ցանկանալով զրուցել նրա հետ նախքան փրոֆ. Նիպերկի մեկնումը արտասահման եւ Զեզ հետ հանդիպումը Փարիզում:

— Դուք հայերք, դուք ինչ արապէլ¹¹ ճեր սիրալիր ուշադրութեամբ, որին ես արժանի չեմ!, բացազնէց նա տեսնելով ինձ իր առանձնասենեակ-գրադարանի շեմքին, համալսարանի վերջայարկում:

— Դուք եւ Ծուետիան արժանի էք աւելին! — ընդհատեցի ես:

Փրոֆ. Նիպերկը ցոյց տուեց ինձ զանազան տեղերից (անգամ ամերիկահայ հերինակներից) ստացած գրքերը ու նամակները, մասնաւրապէս Զեր Սելզոնեան [Յանձնաժողովի] հրատարակութիւնները:

— Հետաքրքիր է ինձ իմանալ, թէ ո՞ր գիրքը Սելզոնեան հրատարակութիւններից ամենից ամելի գրաւեց Զեր ուշադրութիւնը? — հետաքրքրուեցի ես:

Ես սպասում էի, թէ նա ինձ կը պատասխանէր *L'Histoire d'Arménie* Ալբնից, աշքի առաջ ունենալով փրոֆ. Նիպերկի հետաքրքրութիւնը Սերծաւոր Արեւելով եւ որ գիրքը ֆրանսերէն լեզուով է: Նիպերկը, որ մի աշխուժ եւ եռանդով լի տղամարդ է, վեր բռաւ ու ջոկեց կորդի սեղանի փրայ թափուած գրքերի մէջից Զեր Հայրէններու Բուրսապանը, ու նկատեց ինձ սրանչացումով.—

— Մի ամբողջ զանձ! Ես իմ այս տարուան ամառը նուիրելու եմ այս հատորի ուսումնասիրութեանը:

Թէեւ ինձ յայտնի էր Վաղուց մեր միջնադարեան բանաստեղծութեան գրական գեղեցկութիւնը, ծանօթ էի մասնաւրապէս ուսու մեծագոյն բանաստեղծների՝ Պրիստի, Պալմոնտի, Վիաչեսլաւ-Խանովի, Սոլրկուափի¹² եւ ուրիշների կարծիքներին՝ մեր միջնադարեան պետների մասին,— սակայն փրոֆ. Նիպերկի սրանչացումը Զեր գործով ինձ հաճելիօրէն զարմացրեց եւ իմ զարմանքը շխուսափեց նրա տիրող աշքերից:

— Ո՛, ես չեմ ուզում ասել, թէ Սելզոնեան միս հրատարակութիւնները հետաքրքիր չեն! Նրանք բոլորն եւ լուրջ արժէքի գրքեր են, սակայն ես իմ այս ամառուան գրալմունքներին պաշարը ստացայ! — նկատեց նորից ինձ ու սկսեց սիրով թերթել Զեր Հայրէններու Բուրսապանը:

Զեզ, որպէս այդ հատորի հեղինակի, ես չի կարող այլես չգրել փրոֆ. Նիպերկի կարծիք-զնահատականի մասին, գրել այսպէս մանրամասնորեն, «լուսանկարչօրէն», համոզուած թէ շուտ ակնանաւոր գիտնականի մտաւոր որակի մի մարդու զնահատականը եւ պատրաստուածութիւնը իր ամառուան արձակուրդը նուիրել Զեր Ժողովածոնի ուսումնասիրութեանը գուցէ լաւագոյն բարոյական վարձատութիւնն է Զեր կես դարեան յամառ ու դժուարին, տաղանդով կատարուած աշխատանքին՝ մեր միջնադարեան բանաստեղծութեան ամբողջ գեղեցկութիւնը գիտակցել տալու օտարերկրեայ մտաւրականութեան: Մօտերս, թէ առիք ունենար հանդիպելու փրոֆ. Նիպերկին Փարիզում եւ մտերմաքար զրուցելու հետո,— ես համոզուած եմ միանգամայն, — կը կրկնապատկուի Զեր հոգեկան բաւականութիւնը, որ Զեր հատորով սրանչացողը Ծուետիայի լաւագոյն մտաւրականութեան խոշորագոյն ներկայացու-

ցիշներից մէկն է, որը՝ որպէս հայագէտ՝ ի վիճակի է բնագրի գեղեցկութիւնը ճաշակելու անմիջականորեն:

Գերապատի Արտաւազդ արքեպիսկոպոս]¹³ ինձ հաղորդել է, որ Չոր վերապահում էր մի սիրուիրիզ¹⁴ փրոֆ. Նիպերկին եւ շուտ-սրանտինաւ գիտնականներին Փարիզում Օրիենթալսիքների ու Լինկվիսթների¹⁵ համագումարի օրերին: Փրոֆ. Նիպերկը Ուփսալայի համալսարանի ներկայացուցիչն է լինելու արեւելագէտների համագումարին, իսկ փրոֆ. Կունար Կունարստնը պլախտ եւ փիլխոփայութեան (այսինքն Լեթթրը) Փակուլտէտի տուայէնը¹⁶ (հայաստ գիտնական) Եզրուարանների համագումարին: Միևնու բարձրագույն դայլոցները-Լունտ, Սրորիում, Կէօթրպորկ- նոյնակս ունենալու են իրենց ներկայացուցիչները,- եւ փրոֆ. Հեալմար Ֆրիսը¹⁷ նոյնակն կը զայ:

Ծուետացիները առհասարակ եւ շուտ պետութիւնը ազգայնապէս (ազգութին), չափազանց զգայուն են իրենց համբախին՝ արտասահմանում եւ ամենաաշխին ուշադրութիւնը դէալի Ծուետիայի ներկայացուցիչը (դէսպանը-կոնսուլը), դէալի շուտ կուլտուրան ու գիտնականը լայն արձագանգ է գտնում Սրորիումի եւ միևնու քաղաքների թերթերում: *Տակէս Արիհերէր* (օրուայ նորութիւններ) օրաթերքը 250 հազարի տիրած ունի, *Վի (Մենք)* շաբաթաթերքը, որի մէջ տպուած էր Գրիգոր Զօհրապի նորավեալի քարգմանութիւնը՝ 800 հազարից աւելի: Եթէ ի նկատի առնենք Ծուետիայի ազգաբնակչութեան թիւը (7 միլիոնից) պակաս, ի նկատի առնելով նաև Ֆինլանդիայի ծովելերեայ քաղաքների 300 հազարը, ապա այս փաստը պարզ ապացոյց է մեծ կուլտուրականութեան: Զեր ընդունելութիւնը՝ ի պատի շուտ գիտնականների՝ համոզուած եղէր նոյն երեկոն իսկ կը հաղորդուի Փարիզից Սրորիում եւ Armenian=Հայաստան, Armenier=հայ, Armenian=հայկական քաները խոշոր գրերով կը զարդարեն շուտ մամուլի էջերը: Ծնոռանար լուսանկարել տալ Զեր շուտ-հայ բարեկանութեան հաւաքոյըր:

Ծուէտ գիտնականները վերադառնալիք տուն ու հաշի տալով իրենց առաքելութեան մասին՝ համալսարաններին (Ուփսալայի համալսարանը 250 դասաստո ունի), կը շեշտեն նաև հայերի ցուցադրած ուշադրութիւնը դէալի շուտ գիտնականները ու շուտական հայագիտութիւնը:

Զեզ յայտնի է, որ Մովսէս Խորենացու առաջին տպագրութիւնը օտար լեզուվ կատարուել է Ծուետիայում: 1697 թուին երիտասարդ համալսարանաւարտ (28 տարեկան) Հենրիկոս Պրեններուսը ուղեկցել է շուտ դէսպան Ֆավրիցիոսին Պարսկաստան - Իսպահան, 1697-98-99 թթ. Նոր Չուլայում ուսումնասիրել է հայոց լեզուն ու տեղական հայ հոգեւորականութեան օգնութեամբ քարգմանել Խորենացին լատին լեզուով: Վերադարձին (Պարսկաստանից հայրենիք) նա 1700 թ. բանտարկուել է Մովսէսի 1722 թիւը պահուել գերի՝ ուսու-շուտական պատերազմի պատճառով: 1723 թ. Պրեններուսը հրատարակել է մոտ 24-25 տարի ձեռագիր մնացած իր Նոր Չուլայի քարգմանութիւնը¹⁸: Այդ 1697-98 թթ. մինչեւ մեր օրերը - 250 տարուայ ընթացքում չեւ մարել հայագիտութեան ճրագը Ծուետիայում: Ինձ բում է, թէ Զեր կազմակերպէլիք ընդունելութիւնը շուտ-հայկական բարեկանութեան ցոյցին, պէտք է տալ Ծուետիայի հայագիտութեան 250ամեակի գիտական տօնա-

խմբութեան բնոյք՝ մեծարելով նաեւ այսօրուան հայագիտութեան խոշոր դեմքը՝ փրոփ. Նիպերկը եւ հանգուցեալ հայագէտ Էւալու Լիտէնիմ¹⁹ Կէօթըպորկում փոխարինած փրոփ. Հեալմար Ֆրիսը: 250ամեակի գիտական տօնակատարութեան –ընդունելութեան բնոյք տալով այդ պատույ ցոյցին, փարիզահայութեան եւոյքը կը ստանայ նշանակալից երեւոյք. Ծունտիայի մտաւրականութեան եւ շուտու երկրի համար Վերին աստիճանի պատուարեր:

Փրոփ. Նիպերկը չափազանց յուզուել էր Ձեր Նուպարեան Մատենադարանի փրոփ. Մէյէի²⁰ յիշտակին նուիրուած ֆրանսերէն պրոշիրի ընթերցումից: Նա մօտ[իկից] ճամաշել է Մէյէին եւ նրա հանձարի գնահատողներից է: Իմ տպաւորութիւնն է, որ հայերիս ցուցադրած ուշադրութիւնը այնպէս ազդել է փրոփ. Նիպերկի վրայ, որ նա ցանկութիւն ունի աւելի շատ ժամանակ նուիրելու հայերէն պրայտումներին: Յամենայն դէպս, նա պատրաստ է աջակցելու ամէն կերպ հայագիտութեանը՝ Ծունտիայում, նոյնիսկ քարեացակամ է Ուփսալայի համալսարանում մի օր՝ ապագայում – հայերէն լեզուի ու գրականութեան ամբիոնի ստեղծմանը²¹:

Նորայիր ծեռագրերի սեփականատերը Կէօթըպորկ քաղաքն է, որի քաղ[արային] վարչութիւնից է կախուած ծախել կամ նուիրել մեր հայկական հիմնարկութեամ հայերէն ծեռագրերը: Ինձ թում է, թէ շատ լաւ կը լինէր, օգտուել շուտու հայագէտ փրոֆեսորների ներկայութիւնից Փարիզում եւ Ձեզ կազմել խառն շուէկ–հայկական նորայրեան կոմիտէ, Արտաւազդ արքեալիսկոպոսի պատուաւոր նախագահութեամբ եւ փրոփ. Նիպերկի նախագահութեամբ եւ Ձեր ու փրոփ. Ֆրիսը անդամակցութեամբ, գուցէ էլի մի կամ երկու փարիզահայ մտաւրականների անդամակցութեամբ (որքան սակաւարի, այնքան լա՛ ըստ իմ կարծեաց): Այդ շուտ–հայկական գրական–գիտական կոմիտէն կը կատարէր ընտրութիւնը նորայրեան ծեռագրերի մէջ առաջին հերթին հրատարակութեան արժանի (պատրաստի կամ կիսա–պատրաստի գործերի) եւ կը փոխանցէր Զեզ՝ Փարիզ՝ հրատարակութեան: Այդ շուտ–հայկական նորայրեան կոմիտէն Զեզ կը փրամադրէր փաստորէն նորայրեան ծեռագրերից արժեքաւորները՝ փրոփ. Նիպերկի միջոցով հնարաւորութիւն տալով ստանալ Կէօթըպորկ–Ուփսալայից՝ Փարիզ:

Այս շուէկ–հայկական կոմիտէն (5–6 հոգուց) անհրաժեշտ է այն դէպրում ի հարկէ, եթէ Կէօթըպորկի քաղ[արային] ինքնավարութիւնը մերժէ Ձեր խանդիրը՝ ծախել կամ նուիրել նորայրեան ծեռագրերը: Սեր նապատակն է հրատարակութ տեսնել նորայրեան գործերից արժեքաւորը ու պատրաստին (մի 2–3 հատոր) եւ Դուք անշուշտ համամիտ կը լինէր թէ պէտք է փորձել բոլոր ճանապարհները, որոնք կարող են փրկել նորայրեան աշխատութիւնները մի նոր 32 տարի եւս փուտելու դարակներում անպէտօրէն ու անյայտ:

Ես խօսել եմ շուտ–հայկական նորայրեան կոմիտէի ստեղծման հնարաւորութեան մասին փրոփ. Նիպերկի հետ, Վերջինիս նախագահութեամբ ու Արտաւազդ արքեալիսկոպոսի պատուաւոր նախագահութեամբ: Նա սկզբունքով համաձայն է, որ եթէ ծեռագրերը յանձնուեն Ձեզ սեփականատիրոջ կողմից, նա դէմ չէր լինի իր մասնակցութիւնը բերել շուտ–հայկական նորայրեան կոմիտէն: Այնպէս որ նա նախապատրաստուած է այս ուղղութեամբ եւս, եւ Դուք

կարող էք խօսել հետք այդ մասին, եթև հարկ համարեք:

Ես ուզում էի գրել Ձեզ նորայրեան ծեռագրերի մասին, գրել նոյնպէս Ձեր գեղեցիկ գործի – Roseraie d'Arménie²² հատորների շուտերեն բարգմանութեան կազմակերպումի մասին, սակայն նամակս չափազանց երկարեց: Ես շտապում եմ նախ եւ առաջ՝ Ձեզ հաղորդել անհրաժեշտ տեղեկութիւնները Ձեր հայշուտական հայագիտական բարեկամութեան ցոյցի յաջողութեան նպաստող: Շուտը սիրում է փայլ եւ չափազանց զգայուն է դեպի իր անձը ցուցադրած արտաքին պատիքը: Ես համոզուած եմ, թէ հայ-շուտական համար անհրաժեշտ շնորհի անհրաժեշտ շնորհին լուծելու նորայրեան ծեռագրերի բախտը Ձեզ ցանկալի ողղութեամբ, այլև նուաճելու շուտ դեկավար մտաւրականութեան բարեկամութիւնը՝ մեզ հետ ունենալու շուտական օգնութիւնը նաև բոլոր կարեւոր հայկական խնդիրներում:

Խորին յարգանքով՝ U. Լորենի

5.VI.1948, Ուփսալս.

Խորհնակարան 6.

Յ. Գր.-Հետաքրքրութեամբ կարդացի Անահիպի մէջ Ձեր խորհրդածութիւնները արեւնուահայ եւ արեւմուահայ բարբառների շուրջ²³: Ծիչդ է միանգամայն, որ լրերքով²⁴ չի կարելի ընտրել լեզուն կամ պատրաստել լեզու, ինչպէս մի տաճճենիին կամ խնձորենիին պատուաստում են նոր ճիշ-պտու: Պէտք է բողնել ժամանակին ու հանգամանքներին (վաղուան օրուան՝ որ անյասն է մինչ այսօր) մեր լեզուային միութիւնը բնականօրէն լուծելու: Սակայն պէտք է ընդգծել, թէ հայ լեզուի հիմքը եղել է ևս մասուն է Այրարարեան դաշտի գիտացու համով-հոկով խօսած լեզուն, որը այն առաւելութիւնը ունէր եւ ունի մեր միևն զաւաններում (տաճկահայ կամ ոտսահայ) ապնող հայ ազգաբնակչութեան խօսած հայերէնների հետ համեմատած, որ այրարատնեան գիտացին լեզուն հասկանալի էր մեր բոլոր զաւանների գիտացիններին: Ես երեւանցի չեմ եւ չեմ տառապում լրաւ -փարրիորիզմով²⁵, եւ ծանօթ եմ արեւմուահայ հեղինակների շէ-տէկովների²⁶ հետ:

Չգիտեմ թէ ի՞նչ է կատարում Տաճկաստանում փակուած հայութեան բեկորների հետ, սակայն սփիտքի արեւմուահայ լեզուն կորցրել է իր լրակի հիմքը՝ մայր երկիրը եւ հողի վրայ նատած ժողովութական զանգուածը՝ եւ նրա զարգացումը ընթանում է ոչ-առողջ ճանապարհով: Մեր նախկին արեւմուահայ զաւանների բարբառների փոխարէն՝ ստեղծում են ֆրանսահայ, ամերիկահայ, եղիպտահայ եւայլն «լեզուներ» եւ սփիտքի գրական արեւմուահայ բարբառը կամ պիտի մի նոր «գրաբար» դառնայ կամ մեռնի օտար երկնակամարի տակ: Արդէն հայ սփիտքի 3-4 սերնդի հայութեան լեզուն՝ Հայաստանի ժողովրդի (ոռուսահայ թէ տաճկահայ) խօսած լեզուի հետ արեւստականութեն է միայն պահպանելու իր կապը, որպէս մի օդարացու կապը՝ սկրած օդար լեզուի հետ: Եւ միանգամայն ճիչդ է Ձեր եւ բոլոր նրանց ընթացքը, որոնք սփիտքի մասսաների²⁷ ներգաղթի շերմ պաշտպանն են:

Ի միջի այլոց, բոյլ տուեք ինձ մի «փարատոք» այստեղ, որ Աերգաղը՝ հայութեան ազգային ինքնապաշտպանութեան տեսակետից՝ ողջունելի է ոչ միայն Աերգաղողների համար, այլև այսօրուան ապրող Հայաստանում զանգուածների: Պարմական իսար է, որ ուսահայութեան ազգային ինքնագիտակցութեան զարգացում XIX դարում (չեմ ուզեր աւելի խորը յետադարձ հայեացք ծգել կատարուել է լուսակահայութեան ուժեղ ազդեցութեան տակ: Աւելին, ուսահայ զանգուածները կովկասեան քաղաքներում եւ գիտերում ընդունելով պարբերաբար տաճկահայ գաղրականութիւն (մրատրականներ Կ. Պոլսից, Վաճից, Սուշից, Կարինից, Ալմից եւայլն, եւ կոտորածներից եւ ուստաճկական պատերազմներից հետեւող չուումներ-դեղահանումներ Տաճկաստանից՝ Ռուսաստան) – «հայացուել» են: Յարական տիրապետութեան տակ ապրող մեր զանգուածների մէջ նրանք շեշտել են ուսահայերիս «հայկականութիւնը», մայրենի լեզուի նշանակութիւնը եւայլն: Եւ այսօր սփիտոքց Հայաստան ներգաղողոյ, իր սեփական տունը վերադարձող արեւմտահայ զանգուածները՝ փրկում են ոչ միայն իրենց ապագայ սերունդները ապազգայնացումից, այլև մի յաւելեալ հայկականութեան հոսանք են մոցնում Հայաստան, – լինի այդ մեր Հայաստանը ցարական, խորհրդային թէ մի այլ, եւ այդ հայկականութեան բարմութիւնը միայն դրական հետեւանքներ կարող է ունենալ Հայաստանի համար գուցէ մի քանի տասնեակ տարիների ընթացքում, մինչ որ Հայաստանի (այսօրուան) հայութիւնը կը մարսի (տիժիր) ներգաղողոյ հայ զանգուածների հայկականութիւնը կամ արեւմտահայկականութիւնը:

Իմ այս պերումը սոսկ «օրիժինալ փարատոք» չհամարեք, այլ մեր ուսահայ եւ տաճկահայ զանգուածների կուլտուրական–հասարակական զարգացումների փոխ–յարաբերութեան, զարգացման էտապների ուսումնասիրութեան հետեւանք, ուսումնասիրութեան մի աշխատութեան էջը, որ մնաց կիսատ մեր հայրենիքում, երբ ես չուցիի «խորհրդային դրախտը»²⁸:

Սակայն զանք լեզուի խնդրին, որ ինձ վէճ է մեզանում: Պետք էր լսել Պերճ Պոռշեանին Այրարատեան դաշտի խօսած գիտացու լեզուի գովքը անելիս: Պերճ Պոռշեանը, Ղազարոս Աղայեանը եւ Յովհաննես Թումանեանը՝ երեք էլ, ինչպէս գիտեք՝ Վիրխարի հասակի եւ ինչպէս ասում են՝ «պատռած բերան» մարդիկ, սիրող հանարքների եւ ժողովրդի խօսած լեզուի հարստութեան ու նրբութիւնների– նրանցից իրաքանչիւրը գտնում էր, թէ իր ծննդավայր–գաւառի լեզուն ամենահարուստն է ու ամենազեղեցիկը.– Պերճ Պոռշեանը իր Քանաքեռի բարբառը, Ղազարոս Աղայեանը իր Ըոլիսի–Խաչէնի, իսկ Յովհաննես Թումանեանը՝ իր Լոռուայ Դսեղի! Սակայն յաղթանակը միշտ մնում էր Պերճ Պոռշեանին, որովհետեւ նա անդում էր, թէ ոչ մի հայ գաւառի գիտացին այնպէս համով–հոտով չէ հայինում, ինչպէս Այրարատեան դաշտի մաճկալը: Ու սկսում էր ոմքակոծել իր դանդաղկոտ խօսող հակածառողներին այրարատեան ընտիր հայինյանքներով, պեղելով թէ նրանց «կենեզիսը»²⁹ պէտք է փնտուել մեր ուսկեղարեան ժամանակներում եւ Սր. Սահակն ու Սր. Մեսրոպը «ճաշակելով» այդ հայինյանքների գեղեցկութիւնները հմայուել էին այրարատեան բարբառով եւ նոյնիսկ Սր. Գիրը այդ լեզուվ թարգմանել! Զգիտեմ Ձեզ յայտենի է, որ Պերճ Պոռշեանը ոչ միայն երեւանում ածուիս–ծախող է

եղել իր Երիտասարդութեան ժամանակ, այլև 60–70 բուականներին Թիֆլիսում հայ բնի հիմնադրմանից մէկը (Ծերմազանեանց դարպասում³⁰, ուր երեմն գտնում էր Արգար Յովհաննիստեանի³¹ Արշազանի խմբագրատունը, Թիֆլիսի Սողոնի Եկեղեցուց ոչ հեռու, նախկին Կովկասի Բարեգործական] Ընկերութեան երապարակի վրայ) եւ շատ տաղանդաւոր դերասան, ու բոքախոր (արին բբելը) ստիպել էր նրան չուել բեմը, գրող եւ ուսուցիչ դառնալ:

Պերճ Պոռշեանը՝ իմ կրօնի դասակրոն է եղել Ներսիսեան դայրոցում:

Ղազարոս Աղյանեանի Այրբենարանը («Մայրենի լեզու»ն)³² իմ առաջին գիրքը, որի վրայ ես սերտել ու սիրել եմ հայ գրերը:

Յովհաննես Թումանեանի «Ծունն ու կատուն» իմ մանկութեան սիրած ուսանաւորը:

Երեքի զաւակները՝ պատանեկութեան–Երիտասարդութեան ընկերներ, երեմն նաև՝ դայրոցական, ես վայելել եմ՝ արդէն ուսանողութեանս տարիներին երեքի – Պերճի, Յովհաննէսի, Ղազարոսի բարեացակամուրինն ու մտերմուրինը, երբ նրանք մեր ազգային ջողերն էին – գրական դէմքեր: Ակամայ ծառացան առաջը մեր ժողովորի խորքից, որպէս մաքոր աղբիր, ժայրքած այդ երեք գեղեցիկ, կարծես գիտական քերխուղաների³³ դէմքերը՝ ալեխանն մօրուրով ծածկուած ու մազերը քամուն տուած– երբ կարդում էի Անահիկում Զեր յօդածը մեր գրական լեզուի մասին– յօդուած՝ որի եզրակացութիւնը շպէտք է մոռանալ, թէ անժամնանակ յարուցուած մի հարց է:

Նոյնը
5.VI.1948, Ուփսալա

Բ.

30.VI.1948, Ուփսալա, Խոտոնակաքան 6

Մեծարգոյ պ. Ա. Չօպանեան
rue Say 9, Փարիզ.

Սիրելի Վարպետ,

Ընորհակալութիւններս Զեր սիրալիր նամակի համար, որին շտապում եմ պատասխանել:

Արեւելագէտների և Լեզուագէտների Համագումարները (այստեղ խօսւել է զուգահեռ երկու համագումարների մասին) երափրուած են Յուլիս 19–23 օրերի համար, իսկ թէ կարգադրիչ յանձնաժողովը ո՞ր օրն է քացելու, միայն տեղում կ'որոշուի: Ծունդիան իր համալսարանների կողմից ուղարկում է երկուական ներկայացուցիչ՝ մէկը արեւելագէտների և միւսը լեզուարանների համագումարներին: Պաշտօնապէս Ուփսալայի համալսարանը ընտրել է փրոփ. Հենրիկ Նիկերկին արեւելագէտների, իսկ փրոփ. Կունար Կունարսանին՝ որը յայտնի պատիստ է և ֆաքիւթէ առ ֆիլոզոֆիի ինչպէս այստեղ կոչում է ֆաքիւթէ տղ (լեբբը) տուայէն է, լեզուագէտների համագումարներին: Փրոփ.

Ֆրիսը կը լինի Կէօքապորկի բարձրագոյն դպրոցից լեզուագէտների քոնկորին, որպէս համեմատական լեզուաբանութեան ու սամսքրիթերենի դասաւոր։ Քոփենհավակընից կը գայ երեւի խոչորագոյն արեւելագէտ ու հայագէտ եւս, – համալսարանի թեքքը փրոք։ Պերը։

Փրոք. Հեալմար Ֆրիսը հրատարակել է իր վերջին երիտը մեր լեզուի մասին *Etyma Armeniacæ*, 1944 թուին, աւելի առաջ՝ *Suffixales th im Indogerma-nischen էրիտը*, աւելի առաջ՝ *Indogermanica*, որոնց մէջ տեղ է գտնել նաև մեր լեզուն։ Նա շարունակել է յայտնի հայագէտ եւ նոյն Կէօքապորկի բարձր[ագոյն] դպրոցի փրոք։ Էւալու Լիութենի զիծը, իսկ այդ 1939 թուին վախճանուած զիտնականը (*Armeniaca, Armenische Studien եւայլն*) [գործերի հեղինակը] մի լորջ ու մեծ հայագիտական դէմք էր, որ հիմնաւորապէս ուսումնասիրած էր մեր լեզուն Վիեննայի Միսիքարեանների մօտ։

Փրոք. Հենրիկ Նիպերկը շատ աւելի մեծ ու լորջ զիտնական է ու շատ աւելի հմուտ հայագիտութեան մէջ, – նաև վրացերենի, օւերենի եւ այլ Կովկասի ժողովուրդների լեզուին ու պատմութեան, խոշոր իրանագէտ, արաբագէտ, երրայագէտ, եւայլն։ Նա այնքան հմուտ է երրայեցերենի մէջ, որ ուղղել է շուէտ Բիելի բարգմանութեան սխալները՝ շուէտ եկեղեցու առաջարկութեամբ, եւ անզամ հրեայ երրայագէտները նրան ճանաչում են [իրերի] մեծ հեղինակութիւն։ Նա հայերենի վերաբերեալ չունի յատոկ – առանձին աշխատութիւն, սակայն իր աշխատութիւնների մէջ ([ինչպէս] *Hilfsbuch des Pehlevi, Altarmenische Relig եւայլն*), ինչպէս նաև զանազան պարբերականներում (*Le Monde Oriental*⁴ տարեգիրքը, որը հրատարակում է Ծուետիայում եւ որի հրատարակիչն ու խմբագիրն է նա 1926 թուից, *Փարիզի Jurnal Asiatique*⁵ եւայլն) նա լորջ վերլուծութիւններ ունի իրանաբանութեան հայկական աղբիւրների [մասին]։ Սակայն սխալ կը լիներ կարծել, թէ նրա հայագիտական ծառայութիւնը նման է համեմատական լեզուաբանութեան ստվրական պաշարին հայերեն մի քանի բառերին հև տեղ տալու ինտուրպական թերականութեան դասաւորութեան մէջ։ Նա զաղափար ունի աւելի, քան մեր մտաւորականներից շատերը, մեր հին գրականութեան մասին, մեր այսօրուան արեւելահայ եւ արեւմտահայ բանակընների մասին եւայլն։ Եթէ անձամբ առիդ կ'ունենար հետոր զրուցելու ֆրանսերեն, որին կատարելապէս տիրապէտում է, ապա ինքներդ կը համոզուիք, որ ես չեմ չափազանցում եւ տպաւորութիւններս սխալ չեմ։ Եթէ յաջողուի նրան մի փոքր մօղից կապել ու հելպարքել հայութեամբ, նա կարող է տալ ընդիր էրիսրմեր հայագիտութեան մասին, մանաւանդ որ Ծուետիան այսօր տրամադրում է Նորայր Բիուզանդացիին հայագիտական անձնական ընտիր գրադարանը։

Զեր գեղեցիկ *Roseraie d'Arménie*ից շուետական հրատարակութեան զաղափարը իմ մէջ յղացաւ [անընթ.] փրոք. Նիպերկի հետ Զեր Հայրէններու Քուրասպանը հրատարակութեան մասին զրուցելիս, երբ ես տեսայ նրա սրանչացումը մեր Քուչակով (Զեր հաստ հատորի թերթերը կտրտուած էին, ինչ[ը] ցոյց էր տալիս թէ նա արդէն որոշ չափով կատարել էր իր «սկզբնական ծանօթութիւնը»), բայց ես թնալի ոչ մի խօսք չասացի նրան այդ մասին եւ Աս առ այժմն չգիշի իմ այդ դիլաւորութեանն մասին եւ ահա թէ ինչու։

Զեր Roseraieի շունտերեն թարգմանութեան համար ես ի նկատի չունեմ փոքր. Նկարերկին, որը ամենախոչըր գիտական դէմքն է, սակայն ոչ բանաստեղծ: Ես կ'ուզէի, որ Զեր Roseraieի թարգմաներ մի մեծ, շատ մեծ բանաստեղծ: Յիշո՞ւմ էր անշուշտ Զեր գրագրութիւնը Նորայր Բիշվանդացիի հետ 1904–1907 թթ. Ըուշակի շորջը: Ես լաւ յիշում եմ, որովհետեւ 1946 թուին կարդացել եմ Զեր այդ գրագրութիւնից չկորածը, արշիում մնացածը (մեծ մասը կորած է, գեր առայժմս, եւ վախում եմ թէ ընդմիշտ՝ բանի որ անցել է Նորայրի մահուանից 32 տարի!): Զեր քարտերը–նամակները: Նրանցից մեկում Դուք ունեք արած մի շատ տեղին րեփիլք³⁶: Նորայրի բանասիրական գուց եւ տեղին) «քծախնդրութեան» – «խծրծաճքներին», թէ՝ Ըուշակը Զեր հեղաքրորում է որպէս արուեարագէփի, պուէփի, եւ ոչ թէ բանասէփի, եւ Դուք ուզում եք որ ֆրանսիացի ընթերցողը ճաշակի Ըուշակի տաղերի գեղարուեստական գեղեցկութիւնները, նրա հեղինակի բանաստեղծական հանճարի մեծութիւնը: Ես այսօր նոյն կարծիքն եմ, թէ պէտք է շունտական ընթերցողին տալ մի այնպիսի թարգմանութիւն Զեր Roseraieի, որ նա ճաշակի հայկական միջնադարեան բանաստեղծութեան քաղցրութիւնը կրկնի բանաստեղծութեան հանճարի մեծութիւնը: Փոքր. Նկարերկի թարգմանութիւնը կը լինէր բանասէփ–գիտնականի թարգմանութիւն, կատարուած ամենայն բարեխսդութեամբ ու հարազատութեամբ եւայլն եւայլն, Դուք իսկ հասկանում եք թէ ինչ եմ ուզում ասած լինել: Ես աչքի առաջ ունեմ, որպէս թարգմանիչ, մի այլ դէմք, որ այսօրուան Սրբանինաւիայի գուց ամենից խոշոր դէմքն է արուեստի բնագաւառում (արեւտահայերիդ խօսքը՝ կալուածքումն է կարծեմ?): Դա Փէր Լակերքվիսք (Pär Lagerkvist) է³⁷, որի Le Nain (Գաճաճը) մօտերս թարգմանուել էր ֆրանսերեն եւ բանական մեծ յաջողութիւն էր ունեցել: Ես այսօր Ծուես գրականութեան մեծագոյն բանաստեղծն է, մեծագոյն րուսակիէ՛՛, մեծագոյն Անվելիսը՛՛, և մեծագոյն բարեկրագիր–դրամաքուրկը: Դուք գիտէք, որ Ծուետիայի նորագոյն ժամանակների գրական պատմութիւնը Ալկուս Սրբիմայերկիմ⁴⁰ համարում է մի գրական հանճար, որպիսի լինը Ծուետիան չի ունեցել վերջին մի քանի տարուան ընթացքում: Սրբիմայերկը, այդ բատարը, մի աղախնի ու անյայտ հօրից, համարում է փերքիրպարէօր տէ(զ) ամը⁴¹: Այսօր Փէր Լակերքվիսքը [անընթ.թ.] համարում է նոյն Սրբիմայերկի գծի շարունակողը եւ նոյնիսկ մօտերս ես կարդացի նրա վերջին բատերական գործի մասին քննադատութիւն, թէ նա ես մի խոշորագոյն՝ հոգիներ ալեկոծող է, եւ սրբիմայերկեակ մասշտաբի գորդ մի:

Ես կան առայ այս մանրամասնութիւնների վրայ որպէսզի Դուք պատկերացներ թէ որպիսի խոշոր տարբերութիւն պիտի լինի Roseraieի թարգմանութեան մէջ թէ կատարուէր այն մի Փէր Լակերքվիսքի մեծութեան պուտի կողմից, եւ ո՛չ թէ մի մեծ գիտնականի: Հենց միայն այն պարագան, որ թարգմանուել է Փէր Լակերքվիսքի կողմից որեւէ բանաստեղծական հատոր, – արդէն մի գրական երեւոյք է լինելու ամբողջ Սրբանինաւիայում, ոչ միայն Ծուետիայում:

Ամենաանշահամանիր կերպով, ես կ'ուզէի օգնած լինել այս գործում, իմ ուժերիս չափ, որովհետեւ մեր գրականութեան գոհարները միջազգային գրական շուկան հանել եւ մատչելի դարձնել բոլոր ժողովուրդներին, բոլոր երկիրներին, – մի վերին աստիճանի կարեւոր գործ, որի սկզբանիրը Դուք էք

եղած գրեթէ կէս դար առաջ եւ ամբողջ կէս դարուան ընթացքում Ֆրանսիայում: Ես դեռևս չեմ խօսած Փէր Լակերվիսրի հետ այդ մասին, ինչպէս եւ ոչք որի հետ: Ուտք է բոլնել մարդկանց օգտուել կարծ ամառուան եղանակից, քանի որ Ծունդիան գրեթէ ամառ չզիտէ, այլ մի քանի շաբար տաք-արտօտ օրեր, եւ բարձրացնել այդ զրայցը աշնանը: Եթէ Դուր համաձայն էք հետո, ապա կը խնդրէի ուղարկել ծօնումով *Roseraie d'Arménie*ի հատորները՝ ուղղակի իրեն՝ Փէր Լակերվիսրին, որպէս նույն բանաստեղծից բանաստեղծին, մի փոքրիկ նամակով, որի մեջ կարող էք յիշել թէ նրա հասցեն [անընք.]: ինչպէս նաև հայասիրական զգացմունքների մասին դէպի մեր այնքան տուժած ժողովուրդը Զեզ յայտնի է իմ նամակիցս Զեզ: [անընք.] Առ կը ծանօթանայ Զեր հատորների հետ (ո՞հ, եթէ հնարաւոր լիներ ուղարկել նաև Հանս Պերհի *Armenische Nachtingall*ի մի օրինակը միաժամանակ⁴²), կը գրի Զեզ անշուշտ, եւ ես էլ առիք կ'ունենամ արդէն կոնկրետ ծեռվ' դնել խնդիրը՝ խնդրելով նրան անշամբ գլուխվով կանգնել այդ գործի: Ես ինձ պատկերացնում եմ այսպէս:— Փէր Լակերվիսրը՝ որպէս բանաստեղծ եւ շունտական ճաշակին մօտ ծանօթ, ինըզ Զեր երեք հատորներից կը կատարի ընտրութիւն, թէ ի՞նչը բարգմանել: Դուր կը գրէք մի հակիրճ Աերածութիւն յատկապէս շունտական հրատարակութեան համար: Ես կը հրատարակուի այստեղի ամենախոշոր հրատարակչական տաճ կողմից:

Ուտք է յուսալ, թէ Զեզ կը յաջողի մնացեալ երեք հատորները ես Զեր *Roseraie*⁴³ հրատարակել: Մի՞քէ Սելքընեան ֆոնտը կարող էր աւելի գեղեցիկ ու աւելի կարեւոր գործ տալ.— կարեւոր՝ ոչ միայն զուտ գրական տեսակետից, այլև ընդհանրապէս շատ տեսակետներով հայութեանը ծառայող?!

Անշուշտ, պէտք է յուսալ, թէ նորայրեան ծեռագրերը կը յաջողի ստանալ Զեզ Փարիզ, Նուապրեեան Մատենադարանի համար, եւ մի երկու գործ գուցէ թէ մօտ տարիներս նոյնիսկ լրյա ընծայուի[ն]՝⁴⁴: Յամենայն դէպս մի նոր 32 լուսակի տուշին չի ծածկի մեր այդ բանասէրի գործերը, որի կտակի անիմսագուրիսնը (եթէ շատենք աւելին) ուղղակի աաշեցնում է ամէնքին, նոյնիսկ շունտացիներին: Գոնէ իր 150 հազարը (մօտ 200–210 հազար մինչ – առաջին համաշխատային) պատերազմի ոսկէ ֆրանք) կտակէր համալսարանին՝ հայագիտական ամրին հաստատելու!

Ինձ բում է, թէ Նորայրը հայ գրագէտների ընտանիքում միակ սիեսիմէռա⁴⁵ է, որ տրամադրելով մի ահազին գումար, հարուստ մարդու կարողութիւն (չէ՞ որ այդ գումարով կարելի էր գնել 6–7 յարկանի տուն Փարիզում իսկ 1899–1913թք.): Լայիս է, կոպէկի ու սանրիմների վրայ դողում, խեղճ Կարապէտ Բասմաջեանին⁴⁶ հետ սակարկում թէ Ուտք է վճարել բացի յօդուածի գնից, նաև սրբագրութեան համար Տական ֆրանք, գէք 2 ֆր[անք] 50 սենք եւայլն, եւայլն: (Հանր[այ]ին Գրադարանի] Բասմաջեանի արշիմներում պիտի լինեն Նորայրի նամակները): Ես այդ մարդը այն աստիճան կորանում է, որ նոյնիսկ սեփական գործերը չի հրատարակում, իր գումարը տաղ ու տարափ է անում «քարեգործութեամբ»՝ տարեկան երկու անգամ աղքատներին բաժանել իր 125 հազար քրոնի տոկոսները (20 հազարը տուել է իր աղախնուն), իր գեղեգմանի վրայ ծաղկեփունջ դնել, չմոռանալ իինգ տարին մի անգամ Աերկել գերեզմանի

Հրանտակը եւայլն!

Ես ծանօթ եմ մօտէն մեր ոռւսահայ բողոք մեծ ու փոքր գրողների կեանքին՝ դրապատեանների պլէայից⁴⁷ – ու նրա նուիրական պարագլուխ Խաչվատուրը] Արովեանից մինչեւ Զարենց (Խեղճ Եղիշէ, որ շարունակ գրապանը դատարկ, քանի–քանի անգամ դիմած է աւանու⁴⁸ տալ իրեն), Գեղրգ Արով, Նայիրի Զարեան, Ալազան, Ազատ Վշտունից⁴⁹ եւայլն, եւայլն: Պետրոս Սիմեոնեան, Արծրունի, Արգար Յովհաննիսեան, Սպանդար Սպանդարեան, Արասխանեան⁵⁰ (յիշում եմ այստեղ Նորայր Բիովանդացու ժամանակի դէմքեր) – իրենց գրապանն վերջին կոպէկը դնում էին Մեղու Հայաստանի, Մշակի, Արշագանքի, Նոր–Դարի, Սուրբի Վրայ, – իրենք ծառայում էին, պաշտօնավարում մի որեւէ հիմնարկութեան մէջ ու թերի վրայ ծախսում: Ես ինքու իմ ականջով լսած եմ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեակին հայ խմբագիրներից մէկին՝ պոռակին իր կնոջ Վրայ, որը տրտնջում էր թէ ինչու իր ամուսինը հազարները ջորին է ածում, թերքը հրատարակելով, – պոռակին թէ.

«Ես իմ վերջին շապիկն էլ կը ծախսեմ, ու թերքս չեմ դադարեցնի, քո փոխանն էլ կը ծախսեմ, երեխաններս էլ տկլոր թող ման գան, – բայց քանի աշք բաց է՝ պիտի լոյս տեսնի!»

Այսպէս են եղել բոլորը, այսպէս էք եղել Դուք, մեր աւագները, Անահիկը հրատարակելիս, Բանասէրը հրատարակելիս, ու փողոցներում քաքավէտ ու շաքարաչէն գիշերները ծախսել են:

Քանի անգամ, թերթելով նորայրեան կտակի պատճենները ու նրա ծեռագրերը, Զեր նամակների մնացորդները, ես ինձ ասում էի, թէ՝

«Ո՞հ, եթէ 200 հազար կամիսիկ դրամ 1899–1913թթ. լիներ մի Զօպանեանի, մի Բասմաշեանի ծեռքին, ինչ պիտի լինեին Անահիկն ու Բանասէրը, տպագիր գործերի որպիսի հեղեղ պիտի տեղար! Իսկ Նորայրը իր սեփական գրական գործի վրայ զլանում է 150 քրոն (200 ֆրանք) տարեկան ծախսել ու հրատարակել իր Քննասէրը տալիքն մի անգամ, եւ դադարեցնում է իր այդ հրատարակութիւնը այդ պատճառով⁵¹:

Սա մի հրէշատը փաստ է, որ նմանը չունի մեր գրողների ընտանիքում: Մի՞թէ տաճկահայ իրականութեան մէջ եղել է մի երկրորդ այսպիսի սիկսիմէ՛՛? Դուք չէք կարող երեւակայել, թէ որչափ յուգել է այս փաստը ինձ իր ժամանակին, երբ թերուում էի ու փոշուց մաքրում նորայրեան ծեռագրերը Ուփսալայի համալսարանի գրադարանում ու ծանօթանում–ուսումնասիրում այն: Եթք դառնում էի տուն, կինս, որ մի շուտուսիկ է⁵², չէք ճանաչում ինձ, այն աստիճան ես յուզուած էի լինում նորայրեան այդ յիմարագոյն «Վերջին կամքի» թէլադրանքից: Նա վախճանուել է 1915թ.ի Դեկտեմբերի 25–26 գիշերը, ուրեմն՝ այսպէս սասած՝ ականակրէս հայկական մեծ աղէտին Ապրիլ 11–24ի: Եւ մեր այդ «ազգաւեր» բարերարը, որ ամէն բայլափոխում կործըր ծեծում է թէ «կը սիրեմ իմ ազգը» իր 150 հազար շուտական քրոնը բաժին է հանում աղախնին 20 հազար եւ մնացեալը շուտս «աղքատիկ» ներին բաշխում եւ ոչ մի սանրիմ մեր կշոր մը հայ մոլացոյ որբերին, դրմէ դրու ընկած...

Ես գիտէք, սիրելի Վարպետ, որ Ծունդիայում աղքատ չկայ այդ բանի իմաստով, որ գոյութիւն ունի այ երկրներում: Այստեղ աղքատ չկայ, ամէն-

ըլ ունին մի պատառ հաց ու ծածկուած յարկ, որովհետեւ պէկուորիսմը հոգու է պէկուական զանշարկող, բաշխելով բոշակ ծերունիներին, տկարներին, այրիներին, որքերին, կարիքաւորներին ապրուստի միջոց, ծրի բժիշկ ու դեղ, ծրի հագուստ ու կօշիկ եւ այլն: Կան կարիքաւորներ, բայց ոչ աղքատ ու անտուն: Եթզ գաղափար տպալու [համար] այստեղի սոցիալական-տնտեսական օրենսդրութեան մասին, կը յիշեմ, որ անցեալ տարրանից ամէն մանուկ իր ծննդեան առաջին օրուանից մինչեւ 16 լրարեկանը (լրացումը) ստանում է 240 քրոն [անընք.] (100 տոլար[ի] մօտ) տարեկան բոշակ, - լինի այդ երեխան կարիքաւոր թէ միլիոնատերի զաւակ, անխատիր, որպէսզի ծնողները լաւ կերակրեն եւ լաւ հացցեն իրենց զաւակներին: Հարուստ ընտանիքները իրենք կարող են երաժարուել այդ բոշակից, բայց օրենքը չի բաժանում դասակարգերի իր երեխաներին ցոյց տուած օգնութեան ժամանակ:

Եւ զգում էր, անշուշտ, թէ որքան անցուի է նորայրեան կտակի յիմարութիւնը մի այսպիսի երկրում, ուր աղքաւ չկայ, եւ երբ հայ ազգը աշխարհիս ամենաաղքատ ու քշուանը էր, մանաւանդ 1915 թուն, եւ Նորայրը տեսնում էր այդ: Ներեցէր ինձ, որ ես անկարող եղայ զսպել իմ վրդովմոնքս այս նորայրեան անժայր քարաւորութիւնից:

Ի հարկէ,- անցեալն է անց, ու անհատը մի կողմն է մնում, երբ գրական ժառանգութեան շուրջն է խօսքը: Եւ ես իմ վրդովմոնքս չի կարող չարտայայտել մի հայ գրողի, որի ճանապարհը նոյնպէս կարիքի ու զրկանքների հովիտ է եղել,- բայց նա մինչեւ վերջ մնացել է հայ գրող,- ամէն ինչ հայ գրականութեանը զոհ բերելով, եւ գրականութիւնն ու իր տաղանդը ծառայեցնելով իր ժողովրդին:

Նորայրը վախճանուել է 1915թ. Դեկտ[եմբեր] 25-26ին: Նրա դիակը մինչեւ 1924 թ. Դեկտեմբերը մնացել է Վենետիկ⁵³: Նրա 25 արկու (Սրորիոլուում 1903թ. բողած) իրերից 17 արկու իր Հայերէն-քրանս[երէն] բառազիրքն⁵⁴ է եղել: Մնացեալ գրքերը՝ գրադարանը: Ձեռագրերը՝ իր հետն է ունեցել Վենետիկում: Վենետիկի Մխիթ[արեան] վաճքը պատրաստ է եղել գմել 30 հազար ֆրանքով ճեռագրերը, սակայն Նորայրը պահանջելս է եղել 40 հազար ֆրանք (դարձեալ Առայրեան գիծ!): Այդ 1915-1924քք. թէ ի՞նչ է եղել ճեռագրերի մեծագոյն մասի հետ,- յայտնի չէ, թէ որդուել են կորել Նորայրի շատ ճեռագրեր կամ ճեռագրերի որոշ մասեր, Նորայրի ճամակագրութիւնը՝ որի մի մասն է միայն մնացած, անճան մասը: Յայտնի է, որ 1922թ. Հոկտեմբերի ժամանագուրի Ֆրէկուիքս Պրիմուլը Ֆրէկուունիքը կանանց բարեգործական ընկերութիւնը 1.810 քրոնով զիջում է գրադարանն ու ճեռագրերը Կեօթրապորկի համալսարանի Մատենադարանին (քաղաքային), հայագետ Էւալու Լիտէնի միջամտութեան շնորհի: 1922ից մինչեւ 1945-1946 Կեօթրապորկի Քաղաքային Մատենադարանը հայերէն գրքերը մի կողմն է գումար մինչեւ այժմս դեռ չկայ կատարուած ցուցակագրութիւն այդ գրքերի, իսկ բոլքերը (ֆատրա տը փափիէ) մի մասը դէն է ածում, որպէս աղբակոյտ, եւ մի մասը պալրահիմնը՝ իմ Ըուտիսա ժամանումիս շնորհի՝ ազատում է կորստից: Մի սոսկ պատահականութիւն, որովհետեւ երէ ես մի փոքր ուշ ժամանէի Ըուտիսա, երեկի այդ մնացորդ բոլքերն եւս կը կորչէին անհետք, ինչպէս միւսները: Դատեցէր մեր Նորայրի

հեռատեսութիւնը: Կարծում եմ, ես Ձեր նամակի բոլոր հարցերին պատասխանեցի ու նամակս շափից աւելի երկարեց: Ներեցք:

Ես յոյս ունեմ, թէ Ձեր ընդունվութիւնը եւ զրոյցը փրոք. Նիպերկի, Ֆրիսքի, Կունարստնին եւ միւսների հետ կը տայ դրական հետեւանը եւ նորայրեան ձեռագրերը կը դառնան Ձեր Նուպարեան Մատենադարանի ու Սեղոնեան ֆոնտի սեփականութիւնն ու ամէն հայ գրագէտ կարող է օգտուել, ձեռագրերը կարգաւորելուց յետոյ:

Խորին յարգաճրով, Ձեր՝ U. Lörteի

30.VI.1948.

Ուփսալա, Խոտոնակարան

[Անընթ.] Սքանտինալիայի սառնամանիքներում մոռացել եմ եւ խառնում եմ հայկական ուղղագրութիւնները.— կը ներեւ ինձ անշուշտ:

[Անընթ.] Նա չէ սիրում երբ իր ազգանունը գրում է qvist, եւ գրում է kvist!
Pär Lagerkvist, Vikingavagen 1, Lindingo 1.

[Անընթ.] Նա Գերոգ Պրանտսի⁵⁵, Տանիմարքի Ձեզ յայտնի գրական քննադասի ու յայտնի հայտնի բերանից է լսած առաջին անգամ հայութեան մասին,— ինչպէս գրում է ինձ:

[Անընթ.] օրական մօս մի ֆրանք ուսկի է (մինչեւ 1914թ. պատերազմական):

4.

10.VII.1948

Ուփսալա, Խոտոնակարան 6.

Մեծարգոյ պ. Ա. Չօպանեան

9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ,

Այս բովէիս ստացայ Ձեր սիրալիր նամակը եւ շտապում եմ պատասխանել, որպէսզի Դուք ունենար Ձեզ հետաքրքրող հարցերի պատասխանները մինչեւ արեւելագէտների—լեզուագէտների համազումարի բացումը:

1. Ծուետիայից գալու են ոչ թէ երեք փրոքեսորներ,— Նիպերկ, Ֆրիսք եւ Կունարստն,— այլ գուցէ կրկնակին, որովհետեւ Լունտի համալսարանը, Արեւելագէտների Ընկերութիւնը եւ այլն նոյնպէս ունենալու են իրենց ներկայացուցիչները, երէ Ձեր զրոյցը մի մասնաւոր բնոյք է կրելու հայագէտ փրոքեսորների հետ Նորայրի Ճեռագրերի շուրջը, ապա աւելորդ է հրահիրել Կունար Կունարստն փրոքեսորին, որը մի սլաւիստ է, եւ ալէտը է սահմանափակել հրահիրը Նիպերկով ո Ֆրիսքով, որոնք հայագէտներ են եւ ես նրանց հիմնաւորապէս ծաօթացըրել եմ իր ժամանակին Նորայրի Ճեռագրերի բովանդակութեան ու ընդհանրապէս նորայրեան ճեռագրերի նուիրման—զիշման հայկական ազգային որեւէ հաստատութեան հարցի հետ:

2. Երէ Ձեր թէյասեղանին (որը կարող է շատ պարզ ու նոյնիսկ աղքատիկ

լինել, այդ չէ կարեւորը) տալու էք մի պայուսյ ընդունելութեան ընյթ Նուարեան Սատենադարանի սրահում, հայութեան երախտագիտութիւնը արտայայտելու շուտացի և շուտ գիտնականների մտաւորականութեան 250ամեայ հայագիտութեան հետաքրքրութեան առի, ապա անհրաժեշտ է երափրել Ծուետիայի համալսարանների (Ուխալայի և Լունսի, Սբրիոլմի և Կեօրլպորկի) բոլոր գիտնականներին, և նոյնիսկ շուտ դեսպանին և քննչիլ-ժեներալին:

Ինձ թում է, թէ լաւ կը լինէր այս դեպքում երափրել նաեւ Զոփենհակընի և Օպլոյի համալսարանների փրոֆեսորներին եւս, որովհետեւ Տաճիմարը ու Նորվէժը օրկանապէս-մտերմարար կապուած են Ծուետիայի հետ, մանաւանդ՝ համալսարանական մտաւորականութիւնը:

Ես գտնում եմ այս երկրորդ կարգի ընդունելութիւնը, 250ամեակի շուրջը, թէ աւելի պատուաբեր Ծուետիայի գիտնականների համար եւ թէ աւելի նպատակայարմար՝ Առայրեան չեռազրերի ստացման տեսակետից եւս: Կարտոր նաև այս հարցի դեսպանէլից (Նորելեան փրիզի), որը հետաքրքրում է Զեզ և ահա թէ ինչո՞ւ:

3. Զեզյայտնի չէ, թէ որպիսի ահազին աշխատանք է տարում թէկնածուների կողմից, Նորելեան գրական մրցանակը ստանալու: Այդ մրցանակը բաշխում է Academie de Suede[ը] որը բաղկացած է 18 անդամներից, որոնցից մէկն է փրոփ. Նիվերկը, միւսը այն բանաստեղծ Լակերրվիսթը, որին ես կ'ուզենայի հետաքրքել Զեր Roseraie d'Arménienվ: Այդ 18ը աքտանմսիններին հեղակնենքը ուղարկում են իրենց աշխատութիւնները, նրանց հետ ծանօթանալու համար, իրենք գալիս են Սբրիոլմ՝ դասախոսութիւն, իրանց վրայ ուշադրութիւն դարձնելու, կատարում են այցելութիւններ-վիզիթներ այդ աքտանմսիններին շարմէ⁵⁶ անելու և այլն: Ահա Զեզ ամենալ տարուանից մի իրական օրինակ: Սարքը⁵⁷ և Ժիլ Ռոմենը⁵⁸ (յիշենք այս երկու ֆրանսիացի Զեզ ծանօթ գրողներին միայն) եկան՝ մրցանակի բաշխումից մի երկու ամիս առաջ, առաջինը այցելեց ծերունի արքայի եղբայրներին (փրենս Էօժէնին, որը նկարչութեանք էր հետաքրքրուում, և փրենս Քարլին, որին իհր գնաց նրա կալուածքը) եւ Էլզիսրենսիալիզմի հեղինակը մնաց բանական երկար ժամանակ Ծուետիայում, իբրեւ «քուրիսք» ի հարկէ. միւսը՝ Ժիլ Ռոմենը իր ճարտասանութեան վերջին ժիգերն էր թափում իր հրապարակային դասախոսութիւններին՝ իր վրայ դարձնելու ընդհանրութեան ուշադրութիւնը: Ստացաւ Ժիտը⁵⁹ փրին որի թէկնածութիւնը աւելի ճարպկօրէն էր կազմակերպուած: Զեմ ուզում երկարել այդ մասին:

Եթէ լուրջ կերպով չկազմակերպուի, հայկական գրական դէմքին շանսը շատ փոքր է լինելու, որքան էլ նա արժանաւոր լինի այդ մրցանակի համար.— եւ ես գիտեան, կոնկրետորէն, որ օրինակ Կապրիէլ Սիսրբալ⁶⁰ չիլիացի կին բանաստեղծը Զեր մատն իսկ չարժէ, բայց ստացաւ Նորել-փրին, եւ նա-այդ չիլիացի բանաստեղծուին չէ միայն, որ առանց մի բան լինելու գրականութեան մէջ, Նորելեան մրցանակի էր արժանացել:

Իսկ Դուք, հայ աղջատ հեղինակը, անգամ մի օրինակ Զեր Roseraieն չունեք, որ նույիրէք Փէր Լակերրվիսթին,— Սբանիտինալիայի մէծագոյն բանա-

տեղծին, որից կախուած է շատ-շատ բան, քանի որ նա է լինելու Նորէլ փրիի բաշխողը, եւ որպէս բանաստեղծ՝ Վճռական խօսք է ունենալու Ձեր Վերաբերմամբ՝ որպէս բանաստեղծի ու Նորէլեան-փրիի թէկնածուի:

Մի բարեպատեհ հանգամանք.- հայագէտ եւ Ձեր Հայրէններու Բուրասդամով սքանչացած փրոֆ. Նիալերկը այդ Academie de Suedieի ամդամ է,- ուրեմն այդ կաճառը հնարաւորութիւն ունի անմիջականորէն գաղափար կազմելու [ու] Ձեր հայերէն բանաստեղծութիւնների մասին: Խմ կարծիքով, երբ Ձեր ընդունելութեան՝ այսպէս ասած՝ պաշտօնական բաժինը վերջանայ, բռն Արտաւազ Արքեայ[իսկովոսը] (Ձեզ համար անյարմար կը լինէր այդ, քանի որ հարցը Ձեր մասին է լինելու մի անկիւն քաշէր փրոֆ. Նիալերկին եւ առաջարկէր նրան թէ արդեօք կարելի չէ՝ որ հայութիւնը եւս Նորէլեան-փրիի ուշադրութեանը արժանանար? իմայիրը դեկնու սկզբունքայօրէն միայն, առանց անունը տալու Ձեր: Եթէ փրոֆ. Նիալերկը բարեպատեհ պատասխան տայ, ապա արդէն կարելի է աւելի որոշակի մեզ (Ձեզ եւ այստեղ) մտածել, թէ ինչպէ՞ս պէտք է կազմակերպէլ արատեմիսիւնների գրաւումը: (Ձեզ ծանօթ է Արատեմի Ֆրանսէզի քուլիսային խաղերը՝ երբ թեկնածուները սկսում են սիրաշյել արատեմիսիւններին՝ բուեներ շահելու): Յամենայն դէպս Դուք ի նկատի պիտի ունենար, որ Ձեր Roseraieների հատորները եւ այլ հատորներ (նաև *Les Trouveres Arméniens*)⁶¹⁾ պիտի նուիրէք 18 արատեմիսիւններին Ծուետիայում, զուց նաև բազամառանգին (66 տարեկան է) որը որոշ դեր է խաղում՝ այստեղի մտաւորականների հաւաքոյթներին երբեմն նախագահելով, բազաւորի ծերութեան (90 տարեկան) պատճառով: Փրոֆ. Նիալերկը այստեղ չէ, որ ինք այդ մասին խօսէի: Նա արդէն մեկնած է, եւ Փարիզ զայլոց առաջ երեկի կ'այցելի ուրիշ գիտական կենտրոններ եւս, ճանապարհին:

Ուրեմն, այս խնդրին կը Վերադառնանք Ձեր՝ ընդունելութիւն-թէյասեղանից յետոյ, որին այդ իսկ պատճառով տուոք որբան կարելի է փայլ (ոչ թէ սեղանի ճնշուրեան տեսակետից), հրամիրելով շուտացի բոլոր գիտնականների, Ծուետիայի դեսպանի եւ քննչիւ-ժեններալի (նաև փրէս-արաշէին)⁶²⁾ կամ կուլտուրական բաժնի փարիշն, կամ Սրորիոլի թէրբէրի բոլոր գիտնականներից՝ մանաւանի *Svenska Dagbladet*, *Dagens Nyheter* եւ *Stockholms-Tidningen* մեծ թէրբէրի), որպէսզի խօսեցնեք հայութեան մասին [անընք.], հասարակական կարծիք պատրաստք այստեղ, թէ գոյութիւն ունի հայկական մշակոյք՝ որի ներկայացուցչները փառարանել են Փարիզում Ծուետիան ու նրա գիտնականներին հայագիտութեան 250ամեակի առքի:

Համաշխարհային երկու պատերազմները աւերակ դարձրին միւս երկիրները, աղքատացրին աշխարհը.- իսկ Ծուետիան հարստացաւ այդ պատերազմների շնորհիւ, կուլտուրական բոլիչ[ք] գործեց առաջ եւ - համարեցէք մարդկային բուլութիւն կամ պակասութիւն սիրում են արտաքին փայլութիւն. Չոյ[ւ]ում է նրանց ինքնասիրութիւնը՝ երբ շեշտում է նրանց բարի գործը, գիտնականութիւնը, եւայլն: Ու զարկում է թմրուկ ամբողջ երկրում.- այսպէս է ամեն բնագաւառում: Ես շատ կ'ուզէի, թէ Դուք լուրջ ուզում էք դնել Ձեր թեկնածութիւնը Նորէլեան մրցանակաբաշխութեան,- ապա Ձեր թէյասեղանին՝ թէկուզ ամենասանսանյան հրամիրէք իմ վերը բուած երեք երկրների

զիտնականներին եւ շուտ դեսպանին, որը պաշտօնապէս կը գեկուցի կառավարութեանը. իսկ Վերջինս հայատը է եւ վճռող դեր ունի նոյնիսկ Նորելեան մրցանակարաշխումների մէջ:

4. Ես դժբախտաբար չունեմ այստեղ Զեր Roseraie d'Arménieին հատորները, որոնց հետ ծանօթացել եմ Մոսկովայում, որտեղ մնացել է իմ ամձնական գրադարանու, եւ «Երկարէ վարագոյքի» այն կողմը ընդմիշտ փակուած է ինձ համար: Ես կողմնակից եմ ներգաղթին եւ ամէն աջակցութեան՝ Հայաստանին—լինի նա դաշնակցական, խորիդային, ցարական թէ այլ— որովհետեւ նա հայութեան միակ օրիանն է, յենակէտը—սակայն այլ փարապիզիզի⁶⁴ կարգերով սրանչացողը չեմ. Ազատութիւնը հացից առաջ! Եթէ տրամադրէի, հաւատացէք, որ չէի գրել Զեզ՝ ուղարկեցէք Զեր հեղինակութիւնը ուղղակի Փեր Լակերպիստին, եւ իմ օրինակներս կ'ընծայէի նրան:

Դժբախտաբար ես զգիտեմ գրատունների-անթիքվարների⁶⁴ հասցեներ Փարիզում, որ կարելի կը լինէր զնել: Ես կարող էի զնել, եթէ թոյլատրէին փոխանցել դրան արտասահման, եւ նուիրել շուտ մեծանուն բանաստեղծին:

Յամենայն դեպս, եթէ փորփ. Նիստերկը նպաստար կարծիք յայտնի Արտաւազ Արք[եալսկոպոս]ին հայութեան հեղինակի թեկնածութեան կարելինութեան (յաջուրութեան) մասին, լաւ կը լինէր որ Դուք Զեր Roseraieն նուիրաբերէիք, որ նա ծանօթանար հետոք:

Խորին յարգանքներով, Զեր՝ U. Lopézի

10.VII.1948

Ուխսալա, Խոունակարան 6.

Նոյն օրն իսկ, երեկոյեան ժամը 7,15—7,30 Փարիզից ուղղակի բատիոյով հաղորդուում են (յատուկ քորրեսփոնտենք)՝ շուտացիններին հետաքրքրող նորութիւններ:

Դ.

14.VII.1948

Ուխսալա.

Մեծարգոյ ալ. Ա. Չօյանեան
9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ,

Ես արդէն պատասխանած էի Զեր նամակին, որի մէջ հաղորդած էիք, թէ թէյասեղանը միայն երեք փորփեսորների (Նիստերկ, Ֆրիս, Կունարստոն) համար եք որոշած կազմակերպել, երբ ստացայ (այսօր) Զեր նոր նամակը, որի մէջ ուրախացնում եք, թէ ընդունելուրեանը տալու եք աւելի լայն բնոյք. իրավիրելով նաև Նորվէժի ու Տաճիմարքի գիտնականներին, որոնք զալու են Փարիզ Լեզուագէտների եւ Արեւելագէտների Համագումարին:

Նորվէժից եւ Տաճիմարքից թէ ովքեր են զալու, ինձ դժուար է ասել, որովհետեւ այդ մասին չկայ այստեղ տեղեկութիւն, իսկ Օսլոյից եւ Քոփենհակընից,

հարցնելով համալսարաններին, ստանալ տեղեկութիւններ՝ արդէն ոչ կը լինի, որովհետեւ մի քանի օր կը տեսի, իսկ մի քանի օրից համագումարները Փարիզում արդէն կը սկսեն իրենց աշխատանքները: Կարող եմ Զեզ յայտնել ենթարարար, թէ անշուշտ կը գտն երեւի նշանաւոր արեւելագետ-իրանագէտները, որումն եւ հայագէտները՝ Նորվէժի կողմից Օվլոյի յայտնի փրոֆ. Փոն Սունքէ ավ Սորկենշրիերն (G.V. von Morgenstierne), հեղինակը *Indo-Iranian Frontier Languages* անգլերէն գործի, եւ փրոֆ. Ֆոկը⁶⁶ (J. Vogt), իսկ Տաճինարքի կողմից՝ Քոփենհակընի փրոֆ. Ա. Քրիստենսեն (A. Christensen), հեղինակը *L'Iran sous les Sassanides* ֆրանսերէն յայտնի գործի (1936 թուին) եւ փրոֆ. Լ. Հյելմսլև (L.T. Hjelmslev), համաօրէն նաև Քոփենհակընի համալսարանի բնկույրը, որի անունը տուած էի մի քանի օր առաջ գրած նամակում:

Եթէ Զեր թէյասեղան-ընդունելուրեան կազմակերպիչ յանձնաժողովը կապ հաստատի Լեզուագէտների ու Արեւելագէտների Միջազգային Համագումարների կազմակերպիչ յանձնաժողովի հետ, ապա [կը տրուի] Զեզ անհրաժեշտ բոլոր տեղեկութիւնները. – թէ Սրանտինաիայի ո՞ր երկրից եւ ո՞ր համալսարանից ո՞վ է եկած Զեզ հետ Փարիզ:

Խորին յարգանքներովս, Զերդ՝ Ս. Լորելի.

Յ. Գ. Ա. Սի փոքրիկ խնդիր: Զեր Անահիդի վերջին բուի մէջ կարդացի Արուր Եսպուպեանի (Լու Անձելսից) յօդուածը, որի մէջ նա յայտնում է, թէ կազմել է Լարինազիր հայերէն բառազիրը Եւայլն: Կը խնդրէի տալ ի՞նձ նրա հասցէն, ստանալու նրանից մի օրինակ այդ բառազրքի: Զգիտ՝ պ արդեօր արժեքը գրքի, որպէսզի ուղարկէի նրան:

Նոյնը:

Ե.

20.IX.1948
Ուփսալա.

Մեծարգոյ պ. Ա. Չոպանեան
9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ:

Վերադառնալով Ուփսալա, ես գտայ Զեր նամակը Վիեննից: Անշուշտ ներողամիտ կը լինէք ակամայ ոչ պատասխանելու[ս]:

Դուք հաղորդում էք ցաւալի լուր, թէ Ծուետիայի եւ Սրանտինաիայի հայագէտ գիտնականների համար ծրագրուած ընդունելութիւնը (թէյասեղան) ջուրն ընկաւ: Ես չեմ հասկանում թէ ինչո՞ւ?! Նիւրական դժուարութի^[՞] ինն է եղել պատճառը թէ^[՞] կազմակերպիչ յանձնաժողովի մէջ երիտասարդ ուժերի բացակայութիւնը՝ «սև աշխատանքի» կատարման համար?!

Կրկնակի ցաւալի է, որովհետեւ կորցրիք ատիքը մօտից ծանօթանալու Ծուետիայի ակամաւոր մտաւորականների հետ, զրուցելու հետները Զեզ հետաքրքրող հարցերի մասին եւ առիք տալու նոյնակու այստեղի հասարա-

կուրեան «աղին»՝ ծանօթանալու Զեզ եւ հայ մտաւորականութեան հետ Փարիզի:

Զեր նոյն նամակում հաղորդում էք. թէ մի քանի օրից վերադառնալու էք Վիենից Փարիզ եւ կ'ուղարկէք ինձ՝ փրոֆ. Նիպերկին փոխանցելու՝ Զեր մի քանի ֆրամսերէն (ինչո՞ւ միայն ֆրամսերէն, եթք նա կարդում է նաև հայերէն?) աշխատութիւնները. Ես սիրով կը կատարեմ Զեր յաճճնարարութիւնը, սակայն մինչայժմս ոչ մի գիրք չունեմ ստացած Զեզանից փրոֆեսորի համար: Եթէ փոխած չէք Զեր մտաւորութիւնը, կը խնդրէի յամենայն դէպս ի նկատի ունենալ իմ համեստ կարծիքս, — որպէս տեղիս մտաւորականութեան աւելի մօտէն ծանօթի, — որ անյարմար կը լինէր տալ փրոֆ. Նիպերկին հայ գրականութեան մասին մի գիրք՝ վերադառնելու պայմանով, եթք ինը չէ մեզնից գիրք խնդրողը եւ մենք ենք որ ունենք նրանից ակնկալութիւն՝ կարդալ անպայման այս կամ այն հայ գրականութեան վերաբերեալ գիրքը: Կը խնդրէի, ուղարկելու դէպում, մակագրէք Զեր գլխաւոր հեղինակութեան վրայ հօմմաժ⁶⁷ Նիպերկին եւ ուղարկէր միայն այն աշխատութիւնները, որոնք անվերադարձ նույր են նրան:

Իմ հայեցակետս Նորելեան գրական մրցանակի մասին ես արտայայտած եմ Արեւուսուրքի (NN 86 եւ 87) յօդուածում⁶⁸ եւ գտնում եմ հասունացած արդէն, թէ հայ նորագոյն գրականութիւնը եւ նրա ներկայացուցիչը բարոյական իրաւունք ունեն այդ Նորելեան մրցանակի վրայ: Որքա՛ն այսի դիրացներ մեզ հետաքրքրող խնդրի լուծմանը, եթէ յաջորդի ծրագրուած թէյասեղանը ի պատի շուտ-սրանտինա մտաւորականների!

Իմ յօդուած գրուած էք եւ ուղարկուած գրեթէ երեք ամիս առաջ, յուսալով թէ նա կը տպագրուէր այն օրերին Արեւուսուրքում, եթք Փարիզում ժողով[ու]ած էին այստեղի գիտնականները Արեւելագէտների ու Լեզուագէտների Համագումարների առջի, եւ ես ենթադրում էի թէ անպայման տեղի պիտի ունենար Զեր ընդունելութիւն-հաւաքոյքը ի պատի սրանտինա հիմքերի: Թում էք ինձ, թէ իմ յօդուած առիթ պիտի տար ու դիրացներ արծարծելու մասնաւոր գրոյցներում մրցանակարաշխութեան եւ հայ գրականութեան «փոխյարաբերութեան» հեռանկարները: Արեւուսուրքը իր ժամանակին շտպագրեց, յետոյ նա մի ամբողջ ամիս դադար յայտարարեց եւ միայն այժմ է լոյս աշխարհ տեսնում, — սուկալի սրբագրութեանը (միրէ սրբագրիչների այդախի սով է, որ այսքան խայտառակ կերպով են լոյս տեսնում մեր պարբերականները) եւ նոյնիսկ անհասկանալի դարձնող բարերի աղաւաղումով: Ի միջի այլոց, ես գրած էի իմ մի յօդուածում Նորայր Ըիկաննացու մասին — «նա խոլ էր իր սրտին մօտ ընկերող հրաւերին եւս», տպագրուել է «նա իսոց էր» եւայլն: Խմբագիրը իրան հաշի իսկ չէ տուել հասկանալու թէ ոչ միայն ես ինձ չէի կարող թոյլ տալ մի նման արտայայտութիւն Նորայրի հանդես, — այլ որ եթէ իսկ «թոյլատրած» լինէի ինձ նրա պարտքն էր ուղղել այդ անտեղի ու յիմար կոպտութիւնը:

Սակայն ես հետացա խնդրից:

Կրկին անգամ խնդրում եմ ներէր իմ ակամայ ուշ պատասխանելուս: Խորին յարգանքով, Զերդ՝ U. Լորէլի

20.IX.1948

Ուփսալա

25.IX.1948, Ուխսալս,
Բոտոնակաքան 6

Մեծարգոյ պ. Ա. Զավանեան
9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ,

Ստացած եմ այս երկու-երեք օրուան ընթացքում Ձեր նամակը եւ հետեւ-
եալ իրատարակութիւնները -

1. Ա. Զավանեան - *Պատրկէրներ*

2. Ա. Զավանեան - *Կեամբ եւ երազ* - Երկու ամորդական ժողովածու⁶⁹

3. Archag Tchobanian - *Poèmes*, - Mercure de Franceի իրատարակութիւն⁷⁰

4. *Festival de Poesie et de Musique Arméniennes*, Paris, 1945.

5. J. Sevadjian - *Archag Tchobanian*⁷¹

6. Գեղամ Ֆեներձեան - *Արշակ Զավանեան*⁷²

7. Յովհաննես Յովհաննեսիսեանի մատենախոսականը (ձեռագիր):

Համաձայն Ձեր կարգադրութեան՝ Վերադարձնում եմ ներկայ նամակիս հետ Յովհաննեսս Յովհաննեսիսեանի գրախօսականը եւ առաջին փոստով (imprimés) Sevadjianի եւ Ֆեներձեանի աշխատութիւնները: Յովհաննեսս Յովհաննեսիսեանի մեծութեան եւ նորութեան պուտի գնահատականը շատ խոշոր պատի էր մի կանակ բանաստեղծի համար եւ Դուք իրաւունք ունեք պահել այն Ձեր բրերում որպէս reliquum⁷³:

Հայ նորագոյն գրականութեան հարիւրամեակը տօնուեց այս տարի: Մեր լեզուի եւ նորագոյն գրականութեան այդ հարիւրամեայ կերտումին Դուք աքրի կերպով մասնակցել եք 58 տարի, դատնալով մեր արդի գրականութեան ինչպէս պատկերատր կերպով ասում է մեր ժողովուրդը՝ կոնդերից մեկը: Ցաւալի էր ինձ համար, կարդալ Ձեր նամակում ակնարկներ՝ Ձեր հանդեպ իբր ցուցադրած անարդարամտութեան՝ իմ «Նորելեան գրական մրցանակը եւ հայ մտա-
տրականութիւնը»⁷⁴ յօդուածում (Որ լոյս էր տեսել] *Պայքար* եւ *Արեւուսպ* [թերերում], մասնաւանդ որ ես Ձեր մասին որպէս գրական դէմքի, քնաւ չեմ խօսած այստեղ:

«... Ասիկա (Ձեր հասարակական գործունեութեան նուիրութելը) պատճառ մըն է, որպէսզի իմ *հայրենակալիցներից* ունամը մոռնան ինչ որ ես ըրած եմ իբր գրագիտ, իբր գրական քննադատ, եւ մասնաւրապէս բանաստեղծ...»

Ապա -

«... չէի երեւակայեր որ մեր ազգին մէջ պիկի գրանուեհի մկանարականներ որ զիս պիտի այս ծեւով պատժեին իմ գրաքերթեան համար»...

Ես նորից կարդացի յօդուածու, տեսնելու թէ ի՞նչ էի գրած Ձեր վերաբեր-
մամբ, որպէս գրական դէմքի, որ կարող էր Ձեզ յուզել կամ վշտացնել ամենա-
փոքրիկ չափով: Հայատացէք, թէ ոչ մի տող, ոչ մի բառ չուտայ: Կրկնում եմ, ես չեմ խօսած Ձեր մասին, ինչպէս եւ մեր այլ կոճղերի մասին: Մեր միջնադարեան քնարերգութեան արժեքը ընդգծելու՝ միջազգային միջնադարեան բանաստեղ-

ծուրեան մէջ, ես որպէս լուսաբանութիւն քերել էի փրոք. Նիստիկի սքանչացումի փաստը Զեր Հայրէներու Բուրականը ժողովածուով: Մեր գրողների տաղանդաւորութիւնը շեշտելու համար, եւ բուել էի այս Վերջին կես դարուան-ինչ գոյութիւն ունեն Նորելեան մրցանակները (1896 թուից) – մեր խոշոր բանաստեղծների ու արձակագիրների անունները. – սակայն բոլոր անունները «Գնա՞մենիր, արի սիրեմ» պահեռնից: Ես ոչ մի կենդանի բանաստեղծի կամ արշակագրի անուն չեմ կրուել յօդուածուս, գիտակցարար, թե՛ւ գիտեմ որ յօդուածուս յիշուած ոուսահայ Վիլյամի⁷⁵ անբաժան մասն է կազմում Աւտիք Բահակեանը, թե՛ւ գիտեմ որ տաճկահայ յիշած փիլյատի նոյնչափ անբաժան մասն է կազմում (եւ առաւելագոյնը ժամանակագրականապէս) Արշակ Շապանեանը, թե՛ւ գիտեմ որ կայ նաեւ ոուսահայ-տաճկահայ «գրական metis⁷⁶» Լեմն Ծանրը: Երեք դեմքեր, որոնք արդէն մտած են մեր նորագոյն գրականութեան Վերջին 50ամեակի պատմութեան մէջ, եւ Դուք ինձ մեղադրում էք ոչ միայն անարդարամտութեան մէջ դէպի Զեզ, – մեր երեք կոճղերից մէկը, այլև տգիտութեան մէջ հայոց նորագոյն գրականութեան մասին խօսելիս:

Ես ինձ թոյլ եմ տախս մի անտելի լիրիքական շեղում, գուցէ ներելի մի մասնաւոր նամակում, մանաւանդ համեստաբար գրուած մեր արդի գրականութեան կոճղերից մէկին, – որ թե՛ւ ես արտասահմանեան եւ ոուսական համալսարանների սան եմ եղած⁷⁷, սակայն իմ հիմնական դաստիարակութիւն-կոյութիւնն հայկական է եղած, բացադիկ մարուր հայկական, եւ իմ օրօրոցի երգը եղել է մեր տաճը շարունակ կրկնուող Խաչատոր Աբովեանի խօսքերը – «տասն լեզու իմացիր, բայց ամենից աւելի քո մայրենի լեզուն սիրիք»: Թե՛ւ սքանտինաւեան սառնամանիքներում ես սկսել եմ խառնել մեր հին ու նոր ուղղագրութիւնները, – սակայն օրօրոցիս երգը ընդմիշտ անմոռաց է եւ կը մնայ մինչեւ Վերջին շունչս: Եւ գրիշ շարժելու օրուանից ես ճանաչուել եմ մեր գրական մշակների բարեկամ: Ո՞քան եմ ես պաշտպանել խեղճ Եղիշէին (Զարենցին), որը խեղճուում էր բոնապետական մքնուրուտում! Դեռ սոսկալի 1926/27թ., երբ Աւտիք Բահակեանը դաշնակցական էր ու գտնուում էր սփիտքում, – իսկ ես իմ հայրենի Կովկասում Վերջին մարդը չէի, – ես իմ խմբագրութեամբ ու իմ յառաջաբանով (աղաւաղուած սոսկալի գրաքննիչներից) լրսութեացի նրա երկերի ժողովածուն (մի հատոր) Թիֆլիսում, – արժանանալով յանդիմանութեան այդ հրատարակութեան համար: Չեմ ուզում երկարել այս խնդիրների վրայ եւ եթէ ինձ թոյլ տուի վերի անձնական տողերը, ոչ իմ «Նորելեան գրական մրցանակը եւ հայ գրականութիւնը» յօդուածիս համար, եւ ոչ էլ ընդհանրապէս: Ես գիտակցում եմ, որ շեմ մեղանչած Զեր դէմ, որպէս գրական դէմքի, շեմ մեղանչած անարդարամտութեամբ դէպի իմ արդի մայրենի գրականութիւնը, երագելով նրան պսակուած տեսնել միջազգային մրցանակներով:

Ես միանգամայն անկախ մարդ եմ եւ ոչ որից ոչ մի ակնկալութիւն չունեմ: Ես ուզում եմ ամենաանշահախսնդիր կերպով իմ ուժերիս շափ եւ թե՛ւ հեռու հայրենիքիցս՝ օգտակար լինել մերոնց, ծառայել հայ ժողովրդի շահերին: Մինչեւ Երոպայի Վերածնումը աւերակներից, դեռ շատ ժամանակ կ'անցնի, – եթէ անգամ լաւատես լինենք, թէ երրորդ համաշխարհային պատերազմը կարելի չէ ու խաղաղութիւնը ապահովուած է մարդկութեանը, մի քանի տասնեակ

տարիների ընթացքում գոն: Ծուետիան, իրան հետեւող Նորվեժի ու Տանիմարքի հետ, աքի նկատելի դեր ունի միջազգային քաղաքական-կուլտուրական կենցում: Երկու համաշխարհային պատերազմները աւերեցին ու սնանկացրին միևնուրուր, իսկ Ծուետիան հարստացրին ու կուլտուրապես չափազանց բարձրացրին այս երկիրը: Ի նկատի ունեմալով այդ պարագան, ես՝ այս երկու անցած տարիները՝ ամեն կերպ աշխատեցի Զեզ – փարիզեան մտառականութեան դեկավար շերտը – կապել Ծուետիայի մտառականութեան դեկավար շերտի հետ: Զեր կողմից միայն անտարբերութեան եւ անփութութեան հանդիպեցի: Ես համոզուեցի, թէ՝ Դուք չեք հեկաքրքրում Ծուետիայով, թէեւ գիտակցում եի, թէ այս մարդիկ ու այս երկիրը հայութեան հարկաւոր եւ օգտակար են լինելու, եւ Զեզ պէտք էր այլ վերաբերմունք ցուցադրել դէսի շուտու մտառականութիւնը՝ քան ցուցադրում էիք:

Ես խնդրել էի անպայման շուտ-սրանտինաւական մտառականութիւնը ընդունելուրիմ՝ հայ-շուտական հանդիպում կազմակերպել, առիք ունենալով 250ամեայ հայագիտութիւնը Ծուետիայում, եւ օգտուել այստեղի մտառականութիւն ժամանումից Փարիզ՝ Լեզուագետների ու Արեւելագետների Համագումարներին:

Ես խնդրել էի ստեղծել շուտ-հայկական խմբագրական-գրական յանձնաժողով Նորայր Քիովանդացիի անտիս ծեռագրերի տպագրութեան համար՝ պատրաստելու մի երկու հատոր: Գրել էի, թէ Ծուետիայի կողմից մուծեցեք փրոփ. Նիակերկին, փրոփ. Ֆրիսրին (Կեօթըպորկի [համալսարան]) եւ դոցենտ (շարժէ տը քուր) Վիքանտէրին⁷⁸ (Լունտիր համալսարան), – երեք գիտնականներ՝ որոնք հետաքրքրում են հայագիտութեամբ: Զեր կողմից Դուք, Արտաւազդ եավ[իսկոպոսը] եւ էլի ում կը ցանկայիք այդտեղ: Նախագահ՝ փրոփ. Նիակերկի: Պատրաստել Նորայրի երկերը տպագրութեան, չեր նշանակում 1948 եւ 1949[ին դրանք] տպարան ուղարկել, այլ շուտ-հայկական գրական գրական ժամանութեան հիմք դնել:

Ես խնդրել էի Արտաւազդ եավ[իսկոպոսից] նուիրել՝ որեւէ հայկական հաստատութեան կողմից կամ թէկուզ անձնապես (չնչին մի քան է)՝ հայ-ֆրանսերէն գոյութիւն ունեցող լաւագոյն բառարանը կամ հայ-գերմաներէն, կամ հայ-անգլերէն) փրոփ. Նիակերկին՝ Վերջինիս հետ հանդիպումին Փարիզում: Նա ունի Հայկազեանը⁷⁹ եւ երազում է մի այդպիսի բառարանի մասին:

Ես կարծում էի, թէ՝ Արտաւազդ Արքեւակ[իսկոպոսը] կը գտներ համագումարին փրոփ. Նիակերկին, կը նատեցներ աւլո՞ց⁸⁰, ցոյց կը տար Փարիզի հայոց եկեղեցին, կը հրաւիրեր իր տուն, կը հիրասիրեր մի նախաճաշով կամ թէյով. կը զրուցէին մտերմարար ու կը բարեկամանային, կը գրաւէր հայութեանը մի մեծ շուտ դէմք, չափազանց ազդեցիկ թէ ժողովով մէջ, թէ մտառականութեան եւ թէ պալատական շրջանում:

Ոչ մի քան չարուեց, ու գեղեցիկ առիթը թոցրինք, երբ Փարիզի հայ մտառականութիւնը պիտի ապացուցէր իր երախտագիտութիւնը դէսի Ծուետիայի 250ամեայ հայագիտական հետաքրքրասիրութիւնը. իսկ Դուք անձնապես պիտի փայլէիք Զեր գրական մեծ էրիսրիսիոնով⁸¹, յարգուէիք սրանց կողմից, բոլոր քերքերում կը խօսուէր Զեր մասին Ծուետիայում եւ երբ հարկ լինէր՝

շուկացի մրաւորականները մեզ՝ հայութեանը, վարահութեամբ ու սիրով կ'արջազանգէին, մանաւանդ երը Ձեր ամուսն հետ կ'ունենային գործ։ Խնդրում եմ իմ գրածները չընդունել որպէս «կշտամքանք» կամ «վիրաւրանք»։ Ձեզ կամ Արտաւազդ Արքեալ[իսկոպոս]ին։ Ես բնաւ խօրծանքներով զբաղուելու ախտրժակ չունեմ և ոչ էլ աշխարհին ոչ մի մարդու հետ անձնական լուացը լուանալու։ Պարզապէս անհեռակետութիւն մեր կողմից ու սիսալմունք, վիրապում էր։ Ահա այսօր դրում է Արշակ Զօպանեանի թեկնածութեան հացը Նոր[ելեան] գրականի մրցանակի համար և Ծուտիայում ոչ ոք չգիտէ նրա մասին, միայն փրոփ։ Նիպերկը եւ այս էլ նրա Հայրէններու Բուրսականը մի հատորը գիտէ։ Այսօր ուզում եմ դնել Գարեգին Յովսէփեանի⁸² թեկնածութիւնը խաղաղութեան Նորելեան մրցանակի համար, – եւ Փարիզի հայութիւնը գէք հայոց եկեղեցին ճարտարապետութիւնը չցոյց տուին տէր-քաբայի տղին՝ փրոփ։ Նիպերկին, որը շախազանց հետաքրքրում է կրօնների պատմութեամբ ու եկեղեցիների ճարտարապետութեան պատմութեամբ (նա շատ սիրել է Արմենակ Սաքգետեանի աշխատածութիւնը, հրատարակուած ֆրանսերէն Սելզոնեան Յանձնաժողովի կողմից⁸³)։ Ի հարկէ, ոչ Արշակ Զօպանեանին եւ ոչ էլ Գարեգին Յովսէփեանին անձնապէս պէտք չեն մրցանակների փայլը, – բայց նրանց հետ կապուած հիւրական միջոցները հնարաւորութիւն կը տային Ձեզ նուիրուելու ամբողջապէս Ձեր գրական տպագիր ու ցիրուցան եւ անտիպ աշխատութիւնները կարգ բերելուն եւ բողնելուն [կանոնաւորուած մեր ապագայ սերնդին, իսկ Յովսէփեան կաք[ողիկոս]ին՝ փոխանակ դրնէ–դրու մուրալու՝ հնարաւորութիւն ստանալու Անրիիասի Կարողիկոսարանում գիտական մի օճախ ստեղծել, առանց մորացկաննութեան եւ առանց ժամանակ կորցնելու։

Սիրելի Վարպետ, այնուամենային պէտք է անել հնարաւորը՝ մի կողմից որոշ շափով ուղղելու սիսալները, միս կողմից որոշ անիսապալրասկական անհրաժեշտ աշխատանքները կարպարելու, եւ վերջապէս փորձելու Նորելեան գրական մրցանակարաշխութեան դրամնին նուաձելու, – հայութեան համար յանձնին նրա կոճղերից մէկին։ Ձեզ։

Ես մի քանի օրից յետոյ նորից կը գրեմ Ձեզ յատկապէս այդ հարցերի մասին եւ ինչպէս պէտք է մօտենալ խնդրին, որպէսզի որոշ շանս–յոյս ունենանքը թեկնածուական ուշադրութեան Սվենսոր Արատեմիէն ընտրող հաստատութեան մէջ։ Թոյլ տուիք ինձ մի քանի օր կշռել խնդրի բոլոր կողմերը, նախքան Ձեզ նորից գրելը։

Միշտ խորին յարգանքներով, Ձեր՝ Ս. Լորէլի.

25.IX.1848, Ուփսալա,

Խոռունակաբան 6

3. Գ.ր.- Լիբանանից եկած էին էքսքուրսիոնիստներ⁸⁴ Ծուտիա. նրանց առաջին պահանջն էր եղել իրենց ներկայացնելու պատին անել եւ տանել յայտնի արարագէտ պարոն Նիպերկին։ Այս մի քանի օր առաջ էր եւ մարդիկ Սթրիլմից Ուփսալա եկան այդ պատուին արժանանալու։

Սի ամիս առաջ Կ. Պոլսից եկած էր մի քուրք ուսանողուիի, ճամբորդող Ելրոպայում։ Նա յատկապէս ցանկութիւն էր յայտնել տեսնելյայտնի արեւելա-

գետ - *Le Monde Oriental*ի գիտնական խմբագիր հրատարակչին (1926 թուից):

Այսպիսի փաստերի մասին գրում է մամուլում, շոյում է սրանց ազգային ինքնասիրութիւնը եւ բարձրացնում Լիբանանի եւ բարբարոս Թիւրքիայի վարկը, թէեւ փրոֆ. Նիպերկը շատ լաւ գիտ, թէ ինչ է Թիւրքիան, – եւ հայերին որակը:

Է.

15.XI.1948. Ուխսալա,
Իսունակարան 6

Սեծարգոյ պ. Ա. Չօպանեան
9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ,

Ստացած եմ Ձեր նամակը, որի մէջ հաղորդում էք, թէ ֆրանսիացի Զեր բարեկամ գրողները, մասնաւրապէս René Groussetն⁸⁵, պատրաստ են գրել Նորելեան գրական մրցանակը բաշխող Academie de Suedehին եւ Վերջինիս կարեւոր անդամներին [որպէսզի] հերթական գրական մրցանակը բաշխուի հայ գրականութեան ներկայացուցին, – այսինքն Ձեզ: Դուք խնդրում եք ինձ հաղորդել Ձեզ կարեւոր շուէտ ակադեմիկոսների անոնները ու հասցեները, մասնաւրապէս փրոֆ. Հ.Ս. Նիպերկի: Սիրով կը հաղորդեմ Ձեզ ցանկացած տեղեկութիւնները: Բայց կանխապէս պէտք է պարզել մի փոքրիկ հարց:

Ինչպէս Ձեզ յայտնի է, 1948 թուի գրական մրցանակը մօտերս միայն բաշխուել է արդէն անգլիացի գրող՝ Ելիքրին⁸⁶: Դեկտեմբերին Նորելեան մրցանակների արժանացածները պիտի ժողովուն Սրորիոլմ Շուտիայի բազաւորի շնորհաւորութիւնը լսելու եւ նրա ձեռից ստանալու մրցանակի գումարի չեք: Նոյեմբեր, Դեկտեմբեր, Ցունուար ամիսները կ'անցնեն տօնակատարութեան մէջ եւ մրցանակաւորների դասախոսութիւնների, որոնք արտօն են Սրորիոլմում, Ուխսալայում, Լունսում, Կեօրզայրկում բարձրագոյն դպրոցների շրջաններում: Ուրեմն ըստ իմ կարծիքի, մինչեւ եկող տարուայ Փետրուար–Մարտ ամիսը, աննպատակայարմար կը լիներ յարուցելորեւ խնդիր 1949 թուի Նորելեան գրական մրցանակի մասին: Կը մոռացուի 1948 թուի Նորելեան մրցանակաւորների տօնաւորութեան մէջ եւ նոյնիսկ կը համարուի անժամանակ (ժամանակից առաջ): Եթէ աքատեմիկոս René Groussetն գրել Մարտ–Ապրիլ ամսին Ձեր մասին փրոֆ. Նիպերկին շատ աւելի լաւ կը լիներ, քան այժմն: Ի միջի այլոց շտապում եմ պատասխանել Ձեր մի այլ հարցին, թէ փրոֆ. Նիպերկին ոչ մի բացատրութիւն տալու կարիք չկայ «ջուրճ ընկած ընդունեութեան» առքի, որովհետեւ ես նրան ծագուտ իսկ ասած չկամ այդ մասին: Ուրեմն այդ կողմից կարելի է հանգիստ լինել: Գուցէ թէ այս ամառ այդ հայագէտ փրոֆեսորը հանդիպի Ձեր կողմերը եւ Նուարեան Մատենադարանում առիթ ունենար պատույ թէյստեղանի գաղափարը իրականացնել: Տեսնեմ ինչ կը բերի ամառը:

Զգիտեմ Դուք համածա՞յն էք իմ արտայայտածս կարծիքի հետ, թէ

գրութիւնները Զեր մասին՝ հարկաւոր անձանց՝ պէտք է յետածգել մինչեւ գարուն եւ այժմ վաղաժամ է? Եթէ համաձայն չէք իմ արտայայտածն մտքի հետ, ապա ես անմիջապէս կը հաղորդեմ Զեզ հետաքրքրող տեղեկութիւնները: Այժմէն իսկ գրում եմ փրոֆ. Նիբերլի հասցէն՝ Herr Prof. H.S. Nyberg (անունը կրկնակի՝ Henrik Samuel, շուտական բրանսորդիկիսիոն⁸⁷, գործածականը գերմաններնում առաջինն է՝ Henrik), Uppsala, Nedre Slottsgatan (Ամրոցի տակինող) 10.

Զեզ ինձ ուղարկած *Poème* (Mercure de Franceի հրատարակութիւնը) պահում եմ Զեր տրամադրութեան տակ եւ կը յանձնեմ այն շուտ դէմքի[ն], որին կը ցանկար նուիրել:

Սույնում բաւականանում եմ այսքանով, սպասելով իմանալ Զեր որոշումը:

Խորին յարգանքով, Զեր՝ U. Loretz

Ը.

Մեծարգոյ պ. Արշակ Չօպանեան, Փարիզ
Սիրելի Վարպետ,

Սուերս կարդացի մի մամուլում Զեր [յ]առաջարանը Կոմիտաս վարդապետի Հայ գեղուկ երաժշուուրիւնը⁸⁸ ուսումնասիրութեան մասին (Փարիզ, 1938թ.), – մի յառաջարան՝ որի մէջ սուած էք մեր մեծ երաժշտագէտի գործունեութեան ու արժեքի ճիշդ զնահատականը:

Համարձակում եմ խնդրել Զեզնից, եթէ միմիայն կարելի է ի հարկէ, մի օրով ուղարկել ինձ այդ Հայ գեղուկ երաժշուուրիւնը, որը կարդալուց յետոյ՝ նոյն օրը պատուիրեալ փոստով կը վերադարձնեմ Զեզ անհուն շնորհակալութեամբ:

Խնդրեմ ներողամիտ լինել, եթէ հեռաւոր ու հայութիւնից կտրուած Սքանտիմահայից անհանգստացնում եմ Զեզ մի նման խնդրանքով:
Խորին յարգանքով՝ U. Loretz

29.X.1950,

Uppsala,

Idunagatan 6.

Ծ.

Մեծարգոյ պ. Ա. Չօպանեան
9 rue Say, Paris 9e.

Սիրելի Վարպետ,

Երկու օր առաջ ստացայ Զեր սիրալիր նամակը, իսկ այսօր հատորիկները, – մէկը՝ Կոմիտասինը Զեր գեղեցիկ ու անաշատ յառաջարանով, միւսը՝ Զեր 65ամեայ յորելեանի մասին⁸⁹: Թոյլ տուէր իմ խորին շնորհակալութիւններս

մատուցել Ձեզ՝ այդքան բարութեան համար:

Այս՝ ինչ արուած է Ձեզ համար մեր հասարակութեան կողմից Ձեր ներկայ թէ անցած յորելեաններին ընդգծելու մեր բոլորին երախտագիտութիւնը – թիչ է և Դուք արժանի եք շատ աւելին: Բայց ես մտադիր եմ հրապարակով. մեր մամուի էջերից, իմ ամենդու զգացմունքներս միացնել մեր՝ հասարակութեան լաւագոյն բարեմաղբութիւններին, ուստի կը ներկ ինձ եք այստեղ գոհանամ միայն վերի մի քանի տողերով:

Խորին յարգանքով՝ Ձեր՝ U. Lopetjih

8.XI.1950,

Ուփսալա

Ժ.

Սեծարգոյ պ. U. Չօպանեան

9 rue Say, Paris 9.

Սիրելի Վարպետ,

Այս րոպեին ստացայ Ձեր սիրալիր նամակը Մարտէյից, ուր կը գտնուիք Նարեկացու մասին դասախոսելու և Ձեր պատուին կազմակերպուած յորելեանական տօնին անձամբ ներկայ լինելու:

Չափազանց զգացուած եմ Ձեր ուշադրութեան համար և այժմէն իմ խորին շնորհակալութիւններս ընդունեցէք Ձեր Բանասպեղծութիւններից հասորին նույիրելուն համար, թէն գիրքը դեռևս ինձ հասած չէ: Ծայր ի ծայր սիրով և ուշադրութեամբ կը կարդամ եւ, եք առիթ ներկայանայ, նոյնիսկ կը գրեմ իմ տպատրութիւնների մասին:

Իմ յօդուածս «Արշակ Չօպանեան» խորագրով ես արդէն ճամբած եմ մէկը՝ Նի Ենոք Երիկասարդ Հայաստանին, միսք Գահիրէ Արեւին: Եւ երեկի արդէն լրյա են տեսել (ուղարկած էի par avion), քանի որ ունեմ պատասխան խմբագրից (Նի Ենոքից) թէ ստացած է յօդուածս և ուղարկած տպարան: Կարդացած էք ամերիկահայ թերթերում, թէ Ներսոյեան եպիսկոպոսի նախագահութեամբ Դեկտեմբերին տօնուելու է Նի Ենոքում և այլ քաղաքներում Ձեր յորելեանը. ես շտապեցի, որ իմ յօդուածս ասէք ամերիկահայ սերունդին ոչ միայն իմ անձնական խորին յարգանքս, այլ մանաւանդ մեր, «ուսահայութեան» այն բարձր գնահատականի մասին, որ Դուք վայելած եք միշտ:

Սի շարք կոնկրետ փաստերով, կոյրին անգամ տեսանելի դարձնող, լրսարանած եմ Ձեր աւելի քան կտսարեան դեկավար ու նշանաւոր դերը մեր գրականութեան մէջ:

Ես բոյլ եմ տուել ինձ յօդուածս վերջացնել մի բաղձանքով և կը ցանկայի, որ բոլորին կողմից գիտակցուէք նոյնախի անկեղծութեամբ:

Խորին յարգանքով, Ձեր՝ U. Lopetjih

22.XI.1950,

Ուփսալա.

Idunagatan 6.

ԺԱ.

Մեծարգոյ պր. Ա. Չօվանեան
Փարիզ, 9 rue Say, 9.

Սիրելի Վարպետ,

Այս բովածիս փոստը թերեց ինձ Զեր ճամակը Փարիզից եւ Երիտասարդ Հայաստանը Նիւ Եռքքն, վերջինիս մէջ (Նոյեմբեր 21 թիվը) յօդուածս: Քանի որ գրում եք, թէ Դուք այդ հրատարակութիւնը չէք ստանում, ես խկոյն ուղարկում եմ ներփակ Զեզ: *Արեկի⁹¹* յօդուածս նոյնն է:

Կ'ուզէի պարզել մի փոքրիկ թիրմացութիւններ հատորը ես ստացած չունէի՝ երբ գրում էի յօդուածս, որպէսզի նրանց մասին մի քանի խօսք ասէի: Հատորը Մարտէյից ստացած են աւելի ուշ, – սովորական փոստվ, իսկ օդային փոստը 3–4 օր աւելի արագ է սովորականից:

Ցանկանալով Զեզ մի ամրող տասնեակ տարի նոյն առողջ ու կորովի կեանք, մնամ խորին յարգանքներովս, Զեր՝ Ա. Լորելի.

4.XII. 1950, Ուփսալա

Idunagatan 6.

ԺԲ.

13.VII.1952, Ուփսալա,

Մեծարգոյ պր. Ա. Չօվանեան
Paris IXme, rue Say 9.

Սիրելի Վարպետ,

Կարդալով *Այսօյս⁹²* թժ. Պոլոս Քոլուեանի⁹³ *Mes souvenirs⁹⁴* գրքոյկի մասին Զեր յօդուածը, ես հանդիպեցի Զեր «Քոլորին» մեր արդի գրականութեան նահապետին՝ Ասհապետիք կոչելուն դէմ: Անշուշտ – ես ես միանշանակ եմ Զեր առաջ: Զեր բոլորը ինձ յիշեցրեց մի այլ բոլորը, որը ինձ քոյլ եմ տախս վերյիշել այստեղ, մանաւանդ որ գործող անձինք Զեզ քաջ ծանօթ ու նոյնիսկ բարեկամ անձնաւորութիւններ են:

Կը յիշեք մեր տաղանդաւոր դերասան–րեժիսոր⁹⁵ Արմեն Արմենեանը⁹⁶ ու գուցէ թէ ծանօթ եք նաև նրա կնոց հետ՝ տաղանդաւոր դերասանուհուն, Դուրեան–Արմենեան⁹⁷, որը Թիֆլիսի մեր Վանքի բաղդ Դանդուրեան (այստեղից էլ Դուրեան անունը) յայտնի ընտանիքի աղջիկ է⁹⁸: 1924–25թթ. ես Պարուի Հայարդան⁹⁹ (Հայ Արուեստից Տան) հիմնադիրն ու նախագահն էի, եւ Արմեն Արմենեանը մեր «Հայարտան» բատրոնի թեժիսորը, իսկ նրա կինը՝ Դուրեան–Արմենեանը⁹⁹ մեր բատրոնական խմբի առաջին դերասանուիին: Արմենեան ընտանիքը արդէն ուներ 20 տարեկան աղջիկ, որը նոյնպէս թեմի դերասանուի էր եւ ամուսնացած էր ու ուներ երկու տարեկան զաւակ էլ: Նոյնպէս ծնողների նման շնորհալի էր Արմենի դուստրը: Մի անգամ, փորձերի ժամանակ, երբ փիեսում գրաղուած էին մայրն ու դուստրը, եւ Արմեն Արմենեանն էլ թեժիսոր,

Արմենեան-դրստրը մօտենում է մօրը եւ, շտապով թեմ դուրս գալուց առաջ, ձգում է մօտը իր փոքրիկը.-

- Մայրիկ, մայրիկ, իմ հերքն է, մի մտիկ արա սրան մինչեւ զամ...

Դուրեան-Արմենեան [մայրը] բարկութեամբ նկատում է ետելից.

- Քեզ քանի՞ աճզամ եմ ասել, որ ինձ ուրիշների ներկայութեամբ երբեք չասել «մայրիկ»...

Ուրիշների հետ միասին ես բուլիսներից հետեւում էի փորձերին: Այդ տարօրինակ տիալոկին¹⁰⁰ ու տեսարանին վկայ, մօտեցայ մեր քաղի մանկութիւնից ինձ ծանօթ աղջկան - դերասանուիկ «Դուրեան-Արմենեանին ու ծիծառով ընկերաբար նկատեցի, մեր Թիֆլիսի բարբառով.-

- Քու աղջիկն է ու քեզ մայրիկ է ասում! Բա ի՞նչպէս կ'ուզես որ քեզ կանչի..

- «Տիկին Դուրեան-Արմենեան», «Տիկին»...! Ես հասակի ահազին աղջիկը, ծեռքին էլ մի «լակոտ», որ ինձ բոլորի առաջ բդաւում է «մայրիկ-մայրիկ», էլ ինչ պիտի մտածեն մարդիկ քու Հայարդան «Փրիմա-տոննայի»¹⁰¹ մասին: Պիտի մտածեն թէ, մի պառաւած կին եմ... բարուշկա... (ուսւերէն մեծ մայր շատ գործածական մեզանում բառ) ա:

Ես սկսեցինք բոլորս հըղիրով, սրամիտ Դուրեան-Արմենեան դերասանուին էլ մեզ հետ, որը հազի թէ բոլորած լինէր 40 տարին, թէեւ արդէն մեծ մայր էր: Նա շատ ջահել ամուսնացաւ Արմեն Արմենեանի հետ: Բայց Արմենեան-դստեր լեզուն չէր պտտում իր մօրը կանչել «տիկին Դուրեան-Արմենեան» կամ «տիկին»! կամ չէր տիտղոսաւորում, կամ ասում էր «մայրիկ»:

Կարծում եմ, որ Զեր Վերաբերմամբ էլ կրկնուելու է նոյն պատմութիւնը: Որքան էլ Դուք «դժգոհեք» ու «բոլորք» թէ Նահապետ պատիր չէր ուզում, թէեւ այդ անունը ոչ որից այնքան իրաւամբ չէ նուաճուած՝ քան Զեր կողմից,- այնուամենայնի յարգանքը դէախ Զեր գրիշը թոյլ չի տալի[ս], որ մեր լեզուն պտտի այլ կերպ...

Ես փորձում եմ գրիշս հպատակեցնել Զեր ցանկութեան, եւ թոյլ տուեք Յուլիսի 15ին Զեր ծննդեան 80ամեակի առիթով ողջունել մեր գրականութեան միշտ երիտասարդ վարպետին:

Լաւագոյն զգացմունքներով եւ խորին յարգանքով, Զեր՝ U. Լորելի.

Uppsala, Fredsgatan 6.

13 Յուլիսի 1952.

1. Նամակները պահում են Զօպանեանի անձնական ֆոնդի I. բաժնում, թի 2866–2877:
2. Փեր Լազերկվիստ, 1891–1974, շուէդ ականատր գրող:
Լորելին հայերէն է քարգմանել եւ հրապարակել Լազերկվիստի **Գաճաճը** վէախց
մի ընդարձակ հատուած (տես՝ **Նոր զիր**, Նիւ Եռոք, ԺԱ. տարի, 1949–1950, թի 4 (52), էջ 193–210): Ըստ գրողն այս կապակցութեամբ Լորելիին է յղել մի շնորհակա-
լական նամակ, որի բնագիրը հայերէն քարգմանութեան հետ, նոյնպէս տպագրուել
է **Նոր զիր** (ԺԲ. տարի, 1950, թի 2 (46), էջ 122–123): Այդ նամակում Լազերկ-
վիստը նշել է, որ իր նոր՝ **Բարսրբաս** վեպում ինքը հանդէս է քնոել հայ հերոսի՝ Սա-
հակին: Լորելին այդ վէախ՝ Սահակին վերաբերող հատուածները եւս քարգմա-
նաբար հրատարակել եւ հայերէն (տես՝ **Նոր զիր**, ԺԳ. տարի, թի 2 (50), էջ 125–
127):
3. 1946 թուականին հաստատուելով Ծուելիայում Ս. Լորելին ծանօթացել է Ուփսալայի
համալսարանի գրադարանում (Քարոյնա Ռեդիլիա) պահուող Նորայր Թիզան-
դացու անձնական արխիվի մի նախին, այնուհետև Գէօրերողից քնոել է տուել
արխիվի մնացած մասը եւ դասաւորել 44 թթապանակներում (այս առի տես նոր «Նորայր Թիզանդացու անտիպ գրական ժառանգութիւնը» յօդուածը, **Էջմիածին**,
1949, Սարտ–Ապրիլ, էջ 64–68): Յնտեպայում Լորելին Ամերիկահայ Ազգային
Խորհրդի ծախսերով միկրոժապատճենի է վերածել տուել Թիզանդացու արխիվի մի
մասը եւ ուղարկել Երեւանի գիտական կենտրոններին:
4. Բարերարներ՝ Գրիգոր (1843–1920) եւ Կարապետ (1894–1934) Մելգոնեանների
կտակի համաձայն գոյացել է Մելգոնեան Յանձնաժողովը, հրատարակելու համար
հայագիտական արժեքաւոր հատորներ, ինչպէս՝ Աճառնամի Հայերէն արմագա-
կան բառարան:
5. Խօսքը վերաբերում է Նիկողայոս Արքոցի *Histoire d'Arménie* հատորին, որը լրյու է
տեսել 1946 թուին:
6. Խօսքը վերաբերում է Սիրարփի Տեղ Ներսէսեանի *Armenia and the Byzantine Em-
pire*, հատորին, որը լրյու է տեսել 1945ին:
7. Նկատի ունի Արմենակ Սարքանակի *Pages d'art Arménien* ֆրանսերէն աշխատո-
թիւնը, որը լրյու է տեսել Փարփում, 1940ին:
8. Հայրէններու բուրագուանք, համախմբեց եւ լրյու ընծայեց քննական ուսումնասի-
րութեամբ մը եւ ծանօթագորութիւններով՝ Արշակ Զօպանեան, Փարփում, 1940:
9. Թրգմ.՝ հաւաքածոյ:
10. Հենրիկ Սամուել Նիկերզ, 1889–1974, ականատր շուէդ արեւելագէտ, Ուփսալայի
համալսարանի ուսուցչաւոտ, Ծուելիայի Գիտութիւնների Ակադեմիայի անդամ,
քարգմարի աշխատութիւնների հեղինակ:
11. Թրգմ.՝ պարտաւորեցնոյ:
12. Նշուած ուսու բանաստեղծները հայ քերութիւնից կատարած քարգմանութիւններով
հանդէս են եկել Վալերի Բրիսավի կազմած **Հայ բանագույնութիւնը հնագոյն
ժամանակներից մինչեւ մեր օրերը** ժողովածուում, որը լրյու է տեսել Սոսկուայում,
1916ին:
13. Արտաւազդ արքեախսկոպս Սիլրմէեան (1889–1952), ձեռագրագէտ, պատմաբան,
բանասէր, կեանքի վերջին տարիները ապրել է Փարփում:
14. Թրգմ.՝ անակլիկալ:
15. Թրգմ.՝ արեւելագէտների եւ լեզուարանների:
16. Թրգմ.՝ տեսուչ:

17. Հեալմար (Եալմար) Ֆրիսը (1900-), շուէդ լեզուարան, Գէօթերորդի համալսարանի ուսուցչապետ:
18. Նկատի ունի *Epitome Commentariorum Moysis Armeni De Origine Et Regibus Armenorum et Parthorum, Item Series Principum Iberiae Et Georgiae Cum Notis Et Observationibus Henrici Brenneri, Acceffit Ejusdem Epistola ad plur reverend et celebrim. Doct. Ericum Benzeliūm de praesenti statu quarundam gentium Orientaliūm* հասորը, Ստոկհոլմ, 1723: Այն Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան համառութեան լատիներէն թարգմանութիւնն է:
19. Էսալլ Լիլյեն (1862-1939), շուէդ լեզուարան-հայագէտ, Գէօթերորդի համալսարանի ուսուցչապետ:
20. Անտոնին Մէյէ (1866-1939), ֆրանսիացի լեզուարան-հայագէտ:
21. Հայագիտական ամքին Ուփսալյայի համալսարանում երրեւէ չի հիմնադրուել:
22. Նկատի ունի Արշակ Շօպանեանի *La Roseraie d'Arménie* եռահատոր ժողովածուն, որի երեք հատորները լոյս են տեսել 1918, 1923 և 1929 բուկաններին, Փարիզում:
23. Խօսքը Շօպանեանի «Արեւմտահայ լեզուի եւ գրականութեան ապագան» յօդուածի մասին է, *Անահիտ*, Փարիզ, 1947, թի 2, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 1-6:
24. Թրգմ.՝ հրամանագիր:
25. Թրգմ.՝ տեղայնացուած հայենասիրութիւն:
26. Թրգմ.՝ գլուխ գործոց:
27. Թրգմ.՝ զանգուած:
28. Նկատի ունի իր «Հայ հասարակական մտքի զարգացումը Խ. Արովեանից ու Ս. Նալբանդեանից մինչեւ Ստ. Շահումեան և Ս. Սպանդարեան» կիսատ մնացած աշխատութիւնը:
29. Թրգմ.՝ ծննդոց:
30. Թատերասրահ Թիֆլիսում, հիմնուած հասարակական-թատերական գործիչ Գալուստ Շեմազանեանի (1807-1891) կողմից, գործեւէ 1836-1865 բուկաններին:
31. Արգար Յովհաննեսեան (1849-1904), հրապարակախոս, թարգմանիչ, *Արշագանք* պարբերականի հրատարակիչ:
32. Նկատի ունի Պազարոս Աղայանի *Ուսումն մայրենի լեզուի դասագիրքը* (Ա. Բ. Գ. Դ. տաղիների համար), որոնցից առաջինը քառասուն տարուց անելի (1875-1916) եղել է հայ դպրոցների ամենատարածուած այրբենարանը:
33. Թրգմ.՝ տանուտէր:
34. Արեւելագիտական Հանդէս, հրատարակուել է Ուփսալյում, 1906-1941:
35. Արեւելագիտական Հանդէս, հրատարակուել է Փարիզում, սկսած է 1822թ.ից:
36. Թրգմ.՝ ակնարկութիւն:
37. Ամենայն հաւասարականութեամբ, Արշակ Շօպանեանը չի կատարել Լորէլլի խորհուրդ՝ նամակ գրել Լազերկվիստին. Շօպանեանի ֆոնդում ոչ մի փաստաթուրը չգտնուեց այդ կապակցութեամբ:
38. Թրգմ.՝ վիպագիր:
39. Թրգմ.՝ պատմուածագիր:
40. Աւգուստ Սթրինդերգ (1849-1912), շուէդ գրականութեան դասական:
41. Թրգմ.՝ հոգիներ ալեկոծոյ:
42. Նկատի ունի գերմանացի թարգմանիչ Հանս Բէրհեի *Die armenische nachtigall*, գիրքը, որը լոյս է տեսել Բերինում, 1924ին:
43. Դժբախտաբար «մնացեալ երեք հատորները» չեն հրատարակուել, գէթ՝ *Roseraie* վերնագրով:
44. Նորայր Բիզանդացու արխիտ մինչեւ օրս պահում է Գէօթերորդի համալսարանի գրադարանում: Նրա անտիպները Լորէլլու ասած «մօտ տարիներին» չիրատա-

բակության, այլ միայն տասնամեակներ անց, Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անդամ Հայր Մարտիրոս Մինասեանի աշխատասիրութեամք՝ **Հանդէսամօռհեայում** եւ առանձին հասորըներով:

45. Թրգմ. նմուշ:
46. Կարապետ Բասմաջեան (1864–1942), բանասէր, պատմաբան, 1899–1908 բուականներին Փարիզում հրատարակել է **Բանասէր հանդէսը**:
47. Թրգմ. բանաստեղծների խումբ:
48. Թրգմ. առհաշի:
49. Գեղրդ Արով (1897–1965), Նայիրի Զարեան (1900–1969), Վահրամ Ալազան (1903–1966), Ազատ Վշտունի (1894–1958)՝ խորհրդահայ բանաստեղծներ:
50. Թուարկուած են արեւելահայ մամուլի հինգ ականատոր խմբագիր–հրատարակիչները. Պետրոս Սիմեոնեան (1830–1911) **Սևոր Հայասպանի և Արարագի**, Գրիգոր Արծրունի (1845–1892)՝ **Մշակ**, Արգար Յովհաննեսեան (տես՝ ծանօթ թի 31), Սպանդար Սպանդարեան (1894–1922), **Նոր դար**, Աւետիք Արամիսանեան (1857–1912)՝ **Մուրճ**:
51. Նորայր Բիկանդացին **Բանասէր** խմորատիպ հանդէսը հրատարակել է 1887ին, Ստոկհոլմում, այն երկրորդ պարկից յետոյ՝ 1889ին, դադարել է:
52. Նկատի ունի երկրորդ կնոջը՝ հելսինկյաց շուեդուի Եռոք Երգմկեան–Ֆյելին (ծն. 1913), որը մինչեւ օրս բնակում է Ուփսալյանում:
53. 1924 բուականին Նորայր Բիկանդացու դիմ Վենետիկից փոխադրուել է Ստոկհոլմ եւ քաղուել իր իսկ ճեռորվ պատրաստուած գերեզմանում՝ Նուրբա Բեգրաւնին գերեզմանատանը, կնոջ՝ շուեդական արքունի լուսանկարիչ, ծագումով հրետուի Սելլա Եակորսոն–Նորայրի (մահ. 1899) շիրիմի կողքին: Բիկանդացու կուակի համաձայն՝ իր դիմ Վենետիկից տարուել է չորս ճերմակազգեստ կոյսերի ուղեկցութեամբ:
54. Նորայր Բիկանդացի, **Բառագիր ի գաղղիերէն լեզու ի հայերէն**, Կոստանդնուպոլիս, 1884:
55. Գեղրդ Բրանդէս (1842–1912), դամիացի գրաքննադատ, հրապարակախոս:
56. Թրգմ. հնայել:
57. Ժան Պոլ Սարտրին (1905–1980) Նորելեան մրցանակ շնորհուել է 1964 բուականին, որից նա հրաժարուել է:
58. Ժիլ Ռումէնը (1885–1972) այդպէս էլ Նորելեան մրցանակ չի ստացել:
59. Անդրէ Ժիլ (1869–1951), ֆրանսիացի գրող, Նորելեան մրցանակի 1947 բուականի դափնիելիք:
60. Գաբրիէլ Սիստրու (1889–1957), չիլիացի բանաստեղծուի:
61. Նկատի ունի Արշակ Զօպանեանի *Les Trouveres Arméniens*, հասորը, որը լոյս է տեսել Փարիզում, 1906ին:
62. Թրգմ. մամոյ կցորդ:
63. Թրգմ. դրախտ:
64. Թրգմ. հնավաճար:
65. Թրգմ. բորակից:
66. Հանս Ֆոնգը (1903–), նորվեգացի լեզուարան–կովկասագէտ, հայերէնի եւ վրացերէնի վերաբերեալ մի շարք աշխատութիւնների հեղինակ:
67. Թրգմ. ի յարգանս:
68. Խօսքը վերաբերում է Ս. Լորէլիի «Նորելեան գրական մրցանակը եւ հայ գրականութիւնը» վերնագրեալ յօրուածին, որը լոյս է տեսել Փարիզի **Արևմուլք շաբաթաբերքի** յաջորդաբար 12 եւ 19 Սեպտեմբեր 1948 (Բ. տարի, թի 86 եւ 87) համարների մէջ:

69. Արշակ Զօպանեան, *Երկերու սամրողական ժողովածու, Պատկերներ*, Փարիզ, [1940]: Արշակ Զօպանեան, *Կեսնը և Երազ*, Փարիզ, 1945: Այժմ այս երկու գրքերը սպահում են Ուփսալայի համալսարանի աֆրուսախական ինստիտուտի գրադարանում: *Կեսնը և Երազ* գրքի վրայ Զօպանեանը հայերէն մակագրել է «Ծուելացի մեծանուն գիտնական Հ. Ս. Նիփէրկին յարգալիր նուրբ. Ա. Զօպանեան, Փարիզ, 9 Գեկտ. 1948», իսկ *Պարկերներ* գրքի վրայ՝ «Մեծարքոյ Պարոն Հ. Ս. Նիփէրկին սրտագիր նուրբ. Ա. Զօպանեան, Փարիզ, 9 Գեկտ., 1948»:
70. Archag Tchobanian, *Poèmes*, 1908:
71. Այս գիրքը Գեղամ Ֆեներծեանի՝ Ա. Զօպանեանի նուիրուած գրքի ֆրանսերեն թարգմանութիւնն է:
72. Գեղամ Ֆեներծեան, *Արշակ Զօպանեան. կենսագրական և մարդկագրական հօրեր*, Փարիզ, 1938:
73. Ժրգմ.՝ մասունք:
74. Պետք է լինի «Նորելեան գրական մրցանակը եւ հայ գրականութիւնը»: Տես՝ ծանօթ. թիւ 68:
75. Ժրգմ.՝ բանաստեղծների հոյլ:
76. Ժրգմ.՝ խառնուրդ:
77. U. Lortetjն ուսանել է Ժմենի, Փարիզի եւ Մոսկովյայի համալսարաններում:
78. Lortetjն նախորդ նամակներից ոչ մեկում չի տուել արեւելագէտ՝ Լունջի եւ Ուփսալայի համալսարանների դասախոս, ուսուցչապետ Միջի Վիքանդէրի անունը, որն ունեցել է հայագիտական հետաքրքրութիւններ:
79. Նվասիդ ունի Նոր Բանգիրը Հայկագեան Լեզուի բառարանը, հոդ. Ա. եւ Ք., Վենետիկի 1836, 1837:
80. Ժրգմ.՝ ինքնաշարժ:
81. Ժրգմ.՝ խորահմութիւն:
82. Գարեգին Ցոլսէփեան (1867–1952), Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս, հայագէտ:
83. Տես՝ ծանօթ. թիւ 7:
84. Ժրգմ.՝ արշատղ–զրոսաշրջիկներ:
85. Ունի Գրուտ (1885–1952), ֆրանսիացի արեւելագէտ, հայագէտ, Ֆրանսիական Ակադեմիայի անդամ 1946ից:
86. Թոնիա Սթերնս Էլիսը (1888–1965), անգլոամերիկեան բանաստեղծ, թատերագիր, Նորելեան մրցանակի դափնիկիր (1948):
87. Ժրգմ.՝ տառադարձութիւն:
88. Կոմիտաս, *Հայ գեղջուկ երաժշգուրին*, յառաջարամ՝ Արշակ Զօպանեանի, Փարիզ, 1938:
89. Զօպանեանի 65ամեայ յորելեանը Փարիզի մէջ տեղի է ունեցել 1950 Մայիս 14ին, Սորպոնի ամֆիթատրոնում: Տես՝ Կարլեն Դալլարեան, *Արշակ Զօպանեան*, Երևան, 1987, էջ 474:
90. Խօսքը վերաբերում է Զօպանեանի *Բանաստեղծութիւններ* հասորին, որը լոյս է տեսել Փարիզում, 1949ին:
91. Արեգի մէջ սոյն յօդուածը լոյս է տեսել 27 Նոյեմբեր 1950ի թիվն մէջ, Լ.Չ. տարի, թիւ 9718:
92. Ֆրանսահայ օրաթերթ, լոյս է տեսել 1951–54:
93. Պոլոս (Պոլ) Քոլոյեան (1870–1949), ֆրանսահայ թժիշկ, հասարակական գործիչ:
94. Հասորը հաւանաբար լոյս է տեսել 1950ականների սկզբին:
95. Ժրգմ.՝ բեմադրիչ:
96. Արմեն Արմենեան (1871–1965), դերասան–բեմադրիչ:
97. Եկատերինա Գուրեան–Արմենեան (1885–1971), դերասանուիի:

98. Արշակ Չօպանեանը 1927 թուականին Փարիզում դիտել է «Թայֆուն» ներկայացումը Եկատերինա Դուրեան-Արմենեանի գլխաւոր դերակատարմամբ եւ գրել «Մեր արուեստագետները (Զարիթեան-Արմենեան ներկայացման առթի)» յօդուածը (*Ապագայ շաբարաթերք*, Փարիզ, 6, 13, 20, 27 Օգոստոս, 1927), որտեղ նրան համարել է «մեր թատերական արուեստի մեծագոյն ուժերեն մին»:
99. Պարոի Հայարտունը հիմնուել է 1925 Մարտին: Տես՝ Հայկական Սովետական Հանրագիրապան, հու. 6, Երևան 1980, էջ 154–155:
100. Թրգմ.՝ Երկախօսութիւն:
101. Թրգմ.՝ թատերախմբի առաջին աստղ:

S. LORELLI'S LETTERS
TO ARSHAK CHOPANIAN
(Summary)

ARTZVI BAKHCHINIAN

These constitute twelve letters of the contemporary Armenian Scholar S. Lorelli (Suren Yerzenkian 1880-1963) written between June 9, 1948 and July 13, 1952. The letters, written from Sweden and addressed to the Armenian Scholar Arshak Chopanian, shed light on some biographic details of the Armenian philologist Norayr Biuzandatsi. They also reveal Lorelli's attempts to restore Swedish-Armenian cultural ties in collaboration with Armenian scholars of France and particularly with Chopanian. Discussions regarding failures on the part of both Lorelli and Chopanian to nominate Chopanian for the Nobel Prize in literature can be found here along with discussions of Lorelli's "procedural plan" which includes the translation of some of Chopanian's poetry by the renowned Swedish poet, Per Lagerqvist.

